



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- Share — copy and redistribute the material in any medium or format
- Adapt — remix, transform, and build upon the material

II 4m4h 4 W2(10)

2

891.99.09

S-54



58 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԿԻՑ ՀԵՌԱԿԱՆ
ՈՒՍՄԱՆ ԲՅՈՒՐՈ

891.99.09

4.

Չեռազրի իրավունքով

5-54

148.

ԼԵԶ ԿԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՈՒՐՍ II

1931 թ.

ԱՌԱՋԱԴՐՈՒԹ. № 2 (10)

ՊՐՈՖ. Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX—XX Դ. Դ.

891.99.09
ԱՊ - 54

ՅԵՐԵՎԱՆ

1931

Վ Բ Ի Գ Ա Կ Ն Ե Բ

Ա. Տերտերյանի «Հայոց նոր գրականության պատմություն XIX—XX դ. դ.» II հուրս № 1 առաջագրության մեջ («Վերանեսս ֆալսոգյան») սպրտել են հետևյալ վրիպակները: Խնդրում ենք ուղղել:

Տպված է	յե.	տղ	պետք է լինի
հաստատել	4	26	կհաստատենք
զբվ	5	11	զբվածքների թուլություն
հեղաշրջվում են	8	18	հեղաշրջվում է
գեղեցիկ	11	22	հեռաքրքիր
«լեզու», գիտե	13	33	«լեզու» գիտե
գերով հեղինակի	15	25	գերով, հեղինակի
կյանքի հայ	18	27	կյանքի, հայ
ավերանում է	23	14	ավելանում է
ասպարեկ	»	30	ասպարեկ
Առաքյալը, վոր	24	34	Առաքյալը. վերջինս
այս, չափազանց լուրջ են	27	15	այն, չափազանց լուրջ եք
հոգևորություն	29	18	հոգևորականություն
գետրերը	32	10	գերբերը
հաջող են	39	1	հաջող
զարգանալ և ըստ	40	2	զարգանալ ըստ
չեղրակացությունները և սեն- տենցներ	43	16	չեղրակացություններ, սեն- տենցներ
մի հրացանը	»	32	իմ հրացանը
վերադառնում է համոզվում	46	23	վերադառնում է և համոզվում
գիշում է	47	6	գղջում է



2228-51

Ծ Ե Բ Ե Ն Ց

Պատմական վեպը ի՞նչ կերպ է արտացոլում ժամանակակից սոցիալ-
ֆառաֆական կյանքի իրադարձությունը.—Ծերենցի պատմավեպը և
տանկահայ կյանքի առարյա խնդիրները.—Գասակարգային համերաշ-
խությունից փախուցումը «Յերկուկ» վեպում.—Պայսահայ բուրժուազիայի
ճգնաժամը իր հեղինակի տակ առնելու մյուս դասակարգային.—Ա-
ռևտուրական մրցում հույն վանառականության դեմ.—Գրա գրական ար-
ձագանքը «Թորոս Լեվոնի» մեջ.—«Եսմա զասին» դարեկան փարո-
սեր իշխան Թեոդորոս Ռշտունու բերանում.—Ի՞նչ նպատակի յեր ճրգ-
տում Ծերենցի իր այդ փայտկներով.—Վեպերի գեղարվեստական ար-
ժեքը.—Յերկուկայություններ:

I.

Ծերենցը պատմավեպասան է: Նրա յերկերը դեհաստեղուց սուսը
անհրաժեշտ է դնել այն հարցը, թե՞ ինչ արժեք ունի պատմական կյան-
քը վեպի նյութ դարձնելը, կար՞՞ պատմավեպասանությունը գրական
և հասարակական առումով:

Սխալ կլինի, ի հարկե, արժեք տալ պատմական վեպայինքներին
սուս վերապատումին, վորովհետե վորեե մեկը պատմություն չի սո-
վորում պատմական վեպերի հիման վրա, ինչպես վոր վոչ մի բուսարան
իր սուսերկան չի ավանդում նկարիչներին նկարներով, սրինակ՝ «մեոյաչ
բնության» վրա: Պատմավեպասաններից գրեթե վոչ վոք նպատակ չի
գնում կուրորեն հավատարիմ մնալ իր աղբյուրներին: Ընդհակառակը
հաճախ նրանք փոփոխում են պատմարանների ավյալները, վորոնք մեծ
մասամբ անհատական ու մասնավոր յերեուկներ են, և դրանց փոխա-
րեն տալիս են տիպական ու ընդհանուրը՝ դարի, եպոխայի և դործող
անձերի յրեակասար պատկեր ստեղծելու համար: Գյոթեն իր պատմական
եղմենաին անգալակ է դարձնում, չնայած վոր պատմությունը նրան
տան և յերկու դավախների հայր է ճանաչում: Գերմանացի բանաստեղծի
պատճառարանությունը հեռաքրքրական է.—իմ յերկում, ասում է նա,
եղմենար հանդես է գալիս իրեվ թեթև բարքի տեր մի անձնավորու-
թյուն, վորին սալ չի գա մեկ դյուսթին յերեխա ունենալը: Շիլլերն ևս իր
Ռրլանդի կույսին, ինչպես և Դոն Կարլոսին վերագրել է այնպիսի գոր-
ծեր, վորոնք իրական պատմության մեջ չկան, իսկ Վիլհելմ Տեյլին

ստեղծել է ազատ յերեւակայութեամբ: Տոյտոյս իր եպոսկեյայի «Վերջին խոսքում» պարզում է պատմութեան և վեպի, պատմաբանի և վիպասանի անհայտ տարբերութեանը: Պատմութեանը, ասում է նա, տալիս է հերոսներ, այսինքն իրենց կյանքը մի վորոշ զաղափարի յենթարկող մարդիկ մեկուսացնելով նրանց կյանքի հետ ունեցած բազմապիսի հարարութեանները, հատկապես նրա այլ և այլ կողմերի նկատմամբ: Իսկ վիպասանը տալիս է կենդանի անձինք. որինով յեթե դորսավար է, նա շարունակ պատերազմի դաշտում չպետք է լինի, այլ և տանը, և այլն: Պատմութեան համար դեպքերի արդյունքն է կարեւորը, մինչդեռ վիպասանի համար—դեպքերն ինքնին...

Հասկանալի չէ, վոր այդպես «քմահաճո» կերպով պատմութեանը խմբագրելու համար հեղինակը պետք է ունենա յերկու հատկութեան, յերկու գենք. նախ՝ միտք, վորով դեկավարվում է, և ձիւքք, վորի միջոցով գրականորեն ի կատար է ածում այդ միտքը: Պատմական կյանքի ստույգ ըմբռնողութեան համար նա պետք է ունենա գիտականորեն ճիշտ իր պատմահայեցողութեանը, այսինքն պատմական դեպքերի ծագման ու պատճառակցութեան համար վորոշ տեսակետ կամ հասարակական աշխարհայացք, և պիտի տիրի գրական հայտնի կարողութեան, մեռած կյանքը վերակենդանացնելու ձիրքին, վոր կոչվում է ստեղծագործական յերեւակայութեան: Յեթե պատմավիպասանը չունի աշխարհայացք, հասարական մտածողութեան, նա—Իպպոլիտ Տենի կարծիքով—սոսկ մի զվարճացնող է, ժամանցի համար թուղթ մրտող, բայց վոր գրական գործիչ: Յեթե պատմավիպասանը գեղարվեստական ձիրք չունի, նա կարող է շատ իրազեկ լինել իրրե պատմապետ, բայց նրա յերկն բոստմենային «որսարական» կլինի իրրե ստեղծագործութեան: Պատմական վավերագրիչներն հասկանալն ու մեկնաբանելը դեռ բավական չեն, դրա հետ միասին հարկավոր է նրանց ակնարկած կյանքի յերեւակները կենդանացնել, ցուցադրել լիակատար պարզութեամբ ու բազմակողմանիութեամբ: Վիպասանի այդ հատկութեանը Յրանց Մերինգն անվանում է «պատմական արամադրութեան» ստեղծելու կարողութեան:

Բայց կարելի չէ հարադատորեն վերականգնել անցյալ դարերի հրնորյա կյանքը: Հարադատութեանը, հարկավ, կարող է լինել գեթ մտավոր շարժում և վոր յրիվ ճշտութեամբ: Ինքնակենսագրութեան զրոյ արվեստագիտաներից շատերն իրենց անցյալ կյանքը վերարտադրելիս՝ խոստովանում են, վոր վորոշ յերեւակներն են միայն հիշում և շատ մանրամասն մոտացել են: Յեթե փաստապես ապրածն անհնարին է կատարյալ ստուգութեամբ վերականգնել, ավելի ևս դժվար է պատմական դատաչրջանների խորին հուսութեանը վերարտադրել: Վերարտադրութեան համար միշտ բանալի չէ ծառայում ներկան: Այսորից մենք

յիշում ենք յերկը հասկանալու համար: Հետեւապես, պատմավիպասանն անցյալն ըմբռնելու նպատակով՝ ներկան պետք է ուսումնասիրի, «հասարակական սրգանիզմի» որենքների գիտութեան մեջ հմտանալով՝ պատկերացնի նրա հնորյա վիճակի աստիճանական զարգացման բնույթը, տեղափոխվի «հանրային սիմպատիայի» (Ատտերնոյի տերմինն է) միջոցով իր նկարագրած զարաչրջանը: Այստեղ էլ նրա դատակարգային պատկանելութեանն ու հասարակահայեցողութեանը ընտրուում են նրա այս կամ այն վերաբերմունքն անցյալի նկատմամբ, մի յերեւակի, վոր գրականութեան տեսութեան մեջ կոչվում է պատմաբանական մոդեռնիզացիա: Դա վերին աստիճանի ցայտուն կերպով յերեւում է, որինակ, Փրանսիական հեղափոխութեանը պատմական վեպի նյութ պարձնող արեվմատայնությունների գրողների յերկերում, ինչպես են Հյուգոն («1793 թ.» վեպում), Դյուման («Հովսեփ Բարլամո», «Հազար ու մի ուրվականներ» վեպերում), Դիկկենսը («Յերկու քաղաքների պատմութեանը»), Ծատրիանը («Մի գյուղացու պատմութեանը»), Անատոլ Յրանսը («Աստվածները ծարավի յեն»), Պոլ՝ Բուրժե («Միլյոտինի տակ»), և այլն *):

Հետեւաբար, այսուրիա ընթերցողի համար պատմական վեպը սոսկ անցյալ կյանքի այս կամ այն ինտերպրետացիան է, վոր վիպագիրն անում է «միտոգայի զգայնութեամբ», յենելով իր աշխարհայացքից, դասակարգային պատկանելութեանից և հասարակահայեցողութեանից (կոնցրեսպոնսից): Գրական քննադատութեան նպատակը պետք է լինի ցույց տալ այս վերջին գործունների ազդեցութեանը պատմական կյանքի վերարտադրութեան տարրեր ձևերի ու ըմբռնումների վրա, մեկնացնելով հեղինակի «սուբյեկտիվ յեսի» որյեկտիվ, խմբակցական բնույթը կամ նրա «հանրային յեսը», ինչպես ընտրուում է հոգեբան Հյոֆդինգը, վորից առաջ ոուս գիտնական Ալ. Վեսելովսկին նույն յերեւակին անվանել է «խմբակցական (կոլեկտիվ) սուբյեկտիվիզմ»: Այդպիսի աշխատանքը կպարզե վեպի հասարակական արժեքը, այսինքն թե այսոր գործող խմբակցութեաններից վորի ջրաղացին է ջուր ածում վիպագիրը և վորքան նա հաջողել է ճշմարտապատում զարձնել այդ գործը պատմական պերսպեկտիվայի նկատառումով թե իրրե մտածող և թե իրե գեղապետ: Անցած կյանքի պատմաբանական ստատիկան գրական դիմադրիկա դարձնելն է, վոր ժամանակակիցների համար հոտարակակաևորեն հետաքրքրական է շինում այս կամ այն վեպը: Ծարլ Լայոն վեպի հասարակական քննադատութեանը կոչում է «անգեմ քննադատութեան», այսինքն վոր անձ.

*) Նույն այդ յերեւակի մենք տեսնում ենք նաև Բիչեր-Ստուտի և Եպոտն Սինկ-յերի յերկերում, յեր նրանք վեպի նյութ են զարձնում քաղաքացիական պատերազմի Ամերիկայում և ստրուկների ազատագրութեանը (տես որինակ, «Մանասան»):

նական, այլ հավաքական քննադատութիւն, վորովհետեւ յերկն ազդում է մասսայորեն, յերբ նա դառնում է աշտորա համար մտածողութեան և գործունեութեան նշանակներ տվող, միտք և արարք արդյունավորող ազդակ: Պատմական վեպի հերոսը պետք է բամանակակիցների սրտից ծնված լինի, ասում է Ֆրանց Մերինգը:

Հասարակահասակացողութեանից անցնելով արվեստին, պետք է ասենք, վոր դեպքերի կամ անձերի պատկերացման այս կամ այն ձևը պատմական վիպասանի աշտոր ապրած կյանքի արտացոլումն է: Եր գրվածքի մեջ իրականութեանից վախենալը և նրանից մեկուսանալը, դժգոհութեանը ներկայից և անցյալին վարելը, կամ ընդհակառակը՝ իրականութեան սիրելն ու նրան վորդեգրվելը՝ նշան է հեղինակի հասարակական կյանքի հանդեպ բունած այս կամ այն դիրքին, կամ թե նրա կոլեկտիվի հատուկ դերին հանրային ասպարիզում: Այսպես որինակ՝ ուսմանտիկ վիպագիրները Փրանսիական հեղափոխութեանը պատկերացնելիս՝ զուեղարգում և չափազանցում են առաջին հանրապետութեան սերբորի սարսափները՝ յերկյուղ ազդելով իրենց ժամանակակից սերունդներին՝ հեռու մնալու սոցիալ-քաղաքական ընդգզումներից: Այդպիսով՝ նրանց անձնական գրեկայեպայն ակնբախ կերպով արդյունք է նրանց հանրային մտածելակերպի: Մեկը՝ սովորական, տայիս և հոգեբանական արտարակցիաներ, իսկ մյուսը՝ ունակիտար, կենդանի մարգիկ, «Փակտեր», և այդ ունակիզմը, ինքն իր հերթին, հեղինակի կողմից կյանքի բոլորանվեր ընդգրկումն է, նրա յեզուն հասկանալը, մի յեզու, վոր պատմում է հեղինակի «հանրային յեպի» կամ կոլեկտիվի հաղթանակն ու վերելքը, իսկ նույն այդ յեզուն ուսմանտիկի մոտ խորթին է, միտպատ է կամ, ինչպես Բայրընն է ասել՝ «բառերն հանելուկ, մտքերը-թեորեմա յեն», վորպես մութ է, աղտո ու մձձված նրա կոլեկտիվի առաջխաղացման հետագա ուղին:

Այդպիսով՝ հեղինակի աշխարհայացքն ու արվեստը խիստ շարկապած են իրար հետ, և պատմական վեպն ի մասնավորի մերկացնում է այդ կապն ավելի հստակ կերպով, քան ժամանակակից վեպը, վորովհետեւ անցյալի մասին գրելիս համեմատաբար շատ ավելի սրյեկտիվ կարելի յե լինել, քան ներկայի մասին խոսելիս: Յեվ այդ է պատճառը, վոր գրական ունակիզմն ավելի շուտով պատմական վեպի մեջ է հաղթանակ տարել, քան ժամանակակից վեպում, ինչպես հայտնի յե գրականութեան պատմութեանից:

Մասնավորելով մեր խոսքը Մերենցի մասին, պետք է ասենք, վոր նրա աշխարհայացքն ու արվեստն ևս մի սերտ միութեան են ներկայացնում: Տեսնենք այդ յերեւույթը փաստաբան: Նախ՝ աշխարհայացքը, հետո՝ արվեստը, և այնուհետեւ յերկուսն ներքին կապակցութեանը:

II.

Ով իրար հետեից, գրեթե մի շնչով՝ կարողում է Մերենցի յերեք վեպերը, առաջին ապավորութեանը, վոր անվիջապես ստանում է՝ կղեւորական այն ազքատութեանն է, վորի պատճառը հեղինակի պրիմիտիվ հասարակահասակացողութեանն է:

Մտքերի սակավութեան, համոզմունքի տարտամութեան, աններդաշնակ աշխարհայացք, միմյանց խապու ժխտող տեսակետներ-ասա այն մտավոր ծանրույթը, վոր հանդիսարերում է Մերենցի յղեւորական: Ինչ վոր պնդում է արեմտասայ վիպասանը, ինչ վոր արյունքրտինը մտած աշխատում է փաստարանել՝ ըստ ինքյան սակավարժեք են իրեն մտքի հայտնագործութեան: Նրա պնդումների մեջ ճիշտ մտքերն ամենեւին ինքնուրույն չեն, իսկ ինչ վոր ձգտում է ինքնուրույն ձեռով արտահայտել կամ պատճառարանել՝ խորապես սխալ է: Լեսսինգը մի հարանման ատիթով ավելի յավ է արտահայտվել ասելով՝ «Այս գրքի մեջ կան շատ ճշմարտութեաններ և նորութեաններ, բայց նորութեանը ճշմարիտ չէ, իսկ ինչ վոր ճշմարիտ է, նոր չէ»:

Մեր նոր գրականութեան մեջ իրը թե աղեկցութեան է գործել Մերենցի գեմոկրատիկ շունչը, ինչպես պնդում են վոմանք: Բայց մի գրութեան, վոր ծանրապես կասկածներն տեղիք է տալիս, դա մեր հեղինակի գեմոկրատիզմն է: Վերջինս վո՛չ հետեւողական բնույթ ունի, վո՛չ նրա աշխարհայացքի ելութեանից է բղխում, վո՛չ էլ ներդաշնակ ու պատճառարանված է ինքնին: Դա այն աննյութ, վերացական ու եժանաղին «ժողովրդասիրութեանն» է, վորից յուրաքանչյուր հայրադրենի բավական մեծ քանակով մթերած, ամբարած ունի իր գլխում: Աղքատութեան և գեմոկրատիզմի պայքարից, միտիթարյանների և Փրանսիացի ուսմանտիկ Ծառորբիանի կղերական և Փետրայական աղեկցութեան տակից Մերենցը դուրս է գալիս յերկյուղած, կրոնասեր հարկատուի մտայնութեամբ:

Մերենցի յերեք վեպերն էլ նման լլրճուկ մտքերի հեղեկումներն են. տաղտկացնելու շարի կրկնում են միանման պնդումներ: Յերեք վեպերն ևս հիմնական բովանդակութեամբ, դադափարտական հորինվածքով և գրելակերպի պրիմներով մեկը մյուսի պատճենն են ներկայացնում: Հիւրավի. յեթե Մերենցի պատմական վեպերը ուս պիպասան Գոնշարովի արվեստով քամենք ու մղենք, ընդհանուր կրկնողութեաններից ու ավելորդարանութեաններից աղատենք, դուրս կգա մի հատիկ վեպ, վորի հերոսներն ու քարոզները ցան ու ցիր են յեղել յերեք վեպերի յերկայնաձիգ եջերում, փոխանակ ամփոփվելու և սեղմվելու մի շատ հակիրճ պատմավեպի մեջ: Առես, «մի կանչում ժամացույցի հետ գործ ունենք, վոր միշտ նույն թվերն է ցույց տալիս»: Մերենցի վեպերը տառապում են ջրգողութեան հիվանդութեամբ, այսինքն ձրգձգված են վերին աստիճանի:

Ծերենցի վեպերի մեջ լավագույնը համարվում է «Թորոս Լեվոնիկ» :
Տեանենք ինչ իդեոլոգիական հիմքեր ունի այդ վեպը :

Մտքի հակասությունները «լավագույն», հորջորջված այս վեպում
ավելի քան ակնհայտ են : Որինակ՝ ամենից շատ աղյուսեղ ծայր է տալիս
մի անգուստ ատերութուն հույների նկատմամբ, վոր վո՛չ մի բանական
հիմք չունի, յեթե աղգամոլական սնդուսները և սյուսարնակ հայ չար-
չիների բամբասանքները հույն ժողովրդի դեմ համարենք առ վոչինչ :
Մինչդեռ այդ «վախկոտ», «անգրասեր», «օրչացած», և այլ սպիտու-
թյուններ ունեցող հույների հետ դաշն կուխն ու բարեկամությունը
Ծերենցի համարում է Հայաստանի փրկության գրեթե միակ ուղին :
Նույն հայացքն է այստեղ արծարծվում հույների նկատմամբ, ինչ վոր
Քաֆֆին տվել է իր «Դավիթ Բեկ» պատմական վեպում վրացիների
մասին, նրանց անհանդուրժելի վորակումներ պարզեցնելով, միա-
ժամանակ հակասության մեջ ընկնելով, ինչպես և Ծերենցը, վորովհե-
տե իր հերոսի--Դավիթ Բեկի--վողջ քաղաքագիտական ու սոցիալի-
տական ունակություններ մարդման սրբանք վրաստանն և համարում :
Յերկու հեղինակներն էլ իրենց իդեոլոգիան հիմնել են սյուսարնակ և
Թեֆլիսարնակ «ղեմոկրատ հայերի» առորյա ու ընթացիկ քաղաքակա-
նության վրա...

Իրերի անտեսական ու քաղաքական խորքը թափանցելու կարողու-
թյուն չունենալով՝ Ծերենցը միայն սերժանտու կերպով հայհույնել գե-
տե : Դնում է այսպիսի մի խնդիր . ի՞նչից է սուսը յեկել միջնադարյան
Հայաստանում «հակաթու կաթողիկոսությունը» : Ծերենցը պատաս-
խանում է, վոր դրա պատճառը յեղել է ժողովրդի հիմարությունը :
Ժակ դա նշան է, վոր հայ յեկեղեցու «նախարարիցայի» (Ն. Ադոնցի
տերմինն է) մասին Ծերենցն աղոտ գողտիար է ունեցել, չնայած վոր
նա սերում է յերկար ու բարակ ճտուել նախարարության մասին :

Պատմավեպն անցյալ կյանքի լուսարանության մի ձեւ է : Մեր
պատմական կյանքը Ծերենցի գրչի տակ գրեթե վո՛չ մի լուսարանու-
թյուն չի ստացել : Նա անվանական պատմության դժամ սահմաններից
յեղնելու կարողություն չատ քիչ և ցույց տալիս . կանգնած է մեր
պատմիչների սկզբունքային տեսակետների վրա և բնական մտքի ու-
սումնասիրական աշխատանքը համարյա թե խորթ է նրան : Ի՞նչից
ճաղեցին, որինակ, Թորոսի սքանչելի հաջողությունները, «հակ»
Բյուզանդիոնի դեմ նրա հրաշայի հաղթանակը : Ի՞նչպես յեղավ, վոր
«մանուկ Դավիթը հակա Գողթաթի դեմ» ընդգրկեց և պարտության մատ-
նեց նրան : Ծերենցն այս հարցին տալիք պատասխան չունի, չնայած
վոր վեպի գլխավոր պորբեմն հենց դա յե : Յեթե կուզեք նրա տված
մեկնությունը մեջ տեղ կա, բայց վոչինչ չի բացատրում : Հայ ժողո-
վորդը շատ եր խմբվել Քարային Կիլիկիայում, -- փաստարանում և նա,

—ի հարկե, նա մի որ պիտի իջներ և դաշտավայրը վողողեր... Ահա
Ծերենցի «ինտերպրետացիան» :

Անթիվ, անվերջ պատերազմների թվարկում, -- դա յե Ծերենցի
պատմավեպը : Նա կրկնում է պատմիչների եյական ավյալները, ավան-
դական պատմությանից տարբերվելով նրանով, վոր ինքն ավելի շա-
տախոս է, քան իր աղբյուրը :

Քաղաքական և դիվանագիտական այն մճիճը, վոր հյուսել է ա-
վանդական պատմությունը Թորոսի, Մլեհի և Ստեփանեյի--այդ յերեք
յեղբայրների գործունեյության շուրջը՝ մեր հեղինակը լուծել չէ
կարողացել : Ինչ վոր անբացատրելի յե թողել պատմությունը, բավա-
կանանալով միայն կցկատը փաստերի շարահարությամբ, -- Ծերենցն
էլ վարվել է նման խուսափողական յեղանակով : Նրա հերոսների գոր-
ծունեյության քաղաքագիտական գրգայատմաոնները մնում են ատեղ-
ձվածային, վորովհետե մեր պատմության բավիղների խավարի մեջ նա
չի մուծել գեղագետի համապիտու յույսը : Իերենք մի որինակ : Թորոս
և Մլեհ իրր հակամարտ ուժեր են հանդես գալիս, հայտնի թե թա-
ղուն մարտնչում են միմյանց դեմ : Մլեհն յուր կողմն է դարձնում յա-
սիններին և գործում է նրանց սճանդակությամբ : Բայց յերբ հունաց
Մանվել կայրը հարձակում է նախապատրաստում Թորոսի դեմ, յա-
սինների միջոցով և Թորոսը տեղեկանում կայսեր արշավանքի մասին :
Ի՞նչ է այդ պատմական փաստի պատճառը--հայտնի չէ : Թորոսի մյուս
յեղբայրը՝ Ստեփանեն դարձյալ դեմ է ավազ յեղբորը և գործակից
հույներին : Հանկարծ վերջիններիս դավադրությամբ Ստեփանեն սպան-
վում է յեղեռնական, քսամնելի մահով : «Ստեփանե հունաց հետ բնասն-
նությունը շտացուց, --ասում է Ծերենցը, -- և մտերմարար սկսավ կապել
Անդրանիկոս Յեվփորպենի հետ, վոր կայսեր ազգական և տեղական եր
ի Կիլիկիա, և վոր ճաշի հրավիրելով զՍտեփանե Համուս բերդը յե
ուայցյալ ջրո կաթսայի մը մեջ գինքը սպաննել ավալ» (յեր . 203) : Այս
պատմական «փաստը» վո՛չ մի լուսարանություն չի ստացել Ծերենցի
լավագույն անվանված վեպի մեջ :

Հասարակագիտական խնդիրները, վոր չոչափել է Ծերենցը, գոհհ-
կացված են մեծապես : Մեր հեղինակն աղգամոլ է աներեակալելի շա-
փերով : Ազգամոլությունը նրա վեպերի կանխան և ճիշտ այնպես, ինչ-
պես կրոնամոլությունը «Բեն Հուր» և «Հո յերթաս» վեպերում : Ազ-
գամոլություն ժխտող կոսմոպոլիտիզմը նա համարում է հայի հա-
մար անաքանդություն և աշխատում է վարկաբեկել այն, վերազը-
լով հիշյալ գողտիարին անպիտան հատկություններ : Միջազգայնա-
նությունն էրբ թե նշան է մարդկային սրտի անարգ անտարբերու-
թյան, վորտ անձնատիրության և սուս ու սխալ արամարանության :

Բնական և այնուհետև, վոր հետևողական կոմսոլոյիտիզմի համա-
սարասեր դավանանքը ժխտում և Ծերենցը, վորովհետև ինչպես պըն-
դում և նա՝ «ընտելունը զմարդիկ հավասար չե ստեղծած նյութա-
կան և մտավորական կատարելիությամբ» : Հետևապես, իշխանու-
թյան և տիրապետության գաղափարը պիտի համարել մարդկային ան-
կատարելի պատկանելիքներից մեկը (յեր. 118) : Ծերենցի դատողու-
թյուններից այն մտաբերությունը կարելի չե դուրս բերել, վոր «ընտ-
ելունը մեկին ստեղծել և հարուստ լինելու, իսկ մյուսին՝ աղքատ, մե-
կին՝ տիրապետող, մյուսին՝ սարուկ, կամ ինչպես Վոլտերն և յերդի-
ծել-մեկը թամբած ձիու վրա նստած և ծնվել, մյուսը՝ հետիտան...

Անցնենք արեւմտահայ վիպագրի յերկրորդ վեպին : Տեսնենք «Յեր-
կուկի» ինչ իրողութեան հիմնաշենք ունի :

Ասացինք, վոր Ծերենցն իշխանության սկզբունքը համարում և «աս-
տվածազիր կարգ» : Նրա տիրասեր ժողովուրդն ու «ժողովրդասեր» հե-
ջոսները շարունակ կրկնում են, վոր իշխաններին «ազգի գլխին դբել և
ինքն Աստված» : Ծերենցի տիրասեր «գեմոկրատիզմի» իրեայն և միա-
պետական ինքնակալությունը : Չպետք և ամենեւին արժեք տալ մեր
Հեյդնակի այն բոլոր յերկրորդ դժգոհություններին, վոր նա ունի աղ-
նվապետական կարգի դեմ : Սկզբունքով նա նախարարական հասարա-
կարգը չի ժխտում, ընդհակառակն՝ նրա աշխարհայացքն իր բուն և-
յությամբ աղնվապետական և : Յեթե հայ իշխանները «խելք» վնե-
լին և մի հզոր պետություն ստեղծելին, Ծերենցը շատ գոհ կլիներ : Նա
վո՛չ թե աղնվապետության դեմ և, ա՛յլ գոհ չե այն բանից, վոր նա-
խարարությունը թուլանում և ներքին յերկապտակությունից, իսկ վեր-
ջինս բացատրում և անհատների չար կամեցողությամբ՝ ատանց խորա-
մուխ լինելու տիրող տնտեսակարգի ու քաղաքական կազմի պայմաններին
մեջ : Նա ժողովրդասեր և այն չափով, վորքան ժողովուրդը ձգտում և
աղնվապանների պետությունն ուժեղացնելու և աղնվատյաց և այն չա-
փով, վորքան աղնվապանությունն անտարբեր և իր տիրապետության
հզորացման նկատմամբ : Այդ մեկնություններն առաջնորդ ունենալով
միայն կարելի չե հասկանալ, թե ի՞նչ և ուղղում ասել Ծերենցը հետևո-
յալ տողերով. «Ինձ ավելի սիրելի չե այդ անարգ, մոլի և անպիտան նա-
խարարաց դուխը կործանել իրեն գահույթը. այդ դարավոր բազմա-
գլխյան վիշապը, վոր նախարարություն կանխանեն, ջնջել-անհետ
բնել, վոր Հայաստան գլուխ մը միայն ունենա և ժողովուրդ մը, և
լինի մի հոտ և մի հովիտ» (յեր. 341) :

Սխալ կլինի այդ տողերից յեկրակացնել, վոր Ծերենցի իրեայն և
մոգեոն պետությունը, նոր դարի միապետությունը՝ հանդերձ իր
կենտրոնացմամբ, դորանոցային վաշտերով և բյուրոկրատիայով : Վո՛չ :

Արեւմտահայ վիպագրի բազմանքն և դառնալ անյայտին, ավտատիրա-
կան պայմաններին : Յեթե կարելի լիներ մի ցեմենտ ստեղծել միջնա-
դարյան իշխանության հակամարտ ուժերի միջեւ ու այդ ցեմենտի դերը
կարողանար կատարել միահեծանությունը, — Ծերենցը բավարարած
կողար իրեն և նրա գեմոկրատիզմը կհազենար : Գեմոկրատ վիպագիրն
իր միահեծանությունը գիջել կարող և միայն ուղիգարխային. «Հարկ
չե իշխանությունը մեկ անձի միայն հանձնել, — ասում և նա, — կրնա
յերկու-յերեք անձի ալ հանձնվել, միայն թե այդ իշխանությունը գիտե-
նա կանավարել և ամենայն վոք գիտենա նույնպես հնազանդել և ուրիշ-
ները հնազանդեցնել» (յեր. 162) :

Ծերենցի ժողովրդասիրության թեորիական հիմքը խախտու և այն
յամատով, վոր նա գերազանցորեն անհատամուլ և : Անհատը նրա «ժողո-
վրդական» շարժման մեջ նույն դերն և կատարում, ինչ վոր Հոմերոսի,
հրեյից բիրյիական պատերազմների ու Միլտոսի յերկի մեջ աստված-
ներն ու հրեշտակները :

Յերրորդ վեպն և «Թեոպոյսու Ռշտունին» :

Այստեղ Ծերենցի անհատամուլությունը հասնում և անհնարին չափն-
րի : Տնտեսական, քաղաքական և առհասարակ պատմական բնականոն
գարգացման պահանջներն ու պայմանները նա մեկզի չե վանում, այդ
բոլորի փոխարեն մեջ տեղ բերելով բարի և չար անձերին, վորոնց այս
կամ այն ընթացքի հետ կապում և կուլուրտական կյանքի առաջնթացն
ու հետադարձը : Այսպես, որինակ, մի Տրդատ թագավոր հանդիտանում
և այնտեղ հայաստանի յերկնոզն ու «արարելը» : Ծերենցը նրան մե-
ղադրական նստարանի վրա չե նստեցնում՝ հանցավոր համարելով այն
բանում, վոր նախարարական կազմին ուժ և տվել փոխանակ վերացնե-
լու, և նա ի վիճակի չե այդ գործը կատարելու ճիշտ այնպես, ինչպես
հզոր բազկով չբացրել և հեթանոսությունը և փոխարենը հաստատել
բրիտանոսություն : Դժվար և Ծերենցին համոզել, վոր հզոր բազկի ամե-
նակարողության պաշտամունքը սոսկ անհիմն նախապաշարմունք և :
Դժվար և նրան հասկացնել, վոր Փեոգալական Հայաստանի թուլություն-
ը «չար» մարդկանց շարությամբ չե պայմանավորված : Այդ բոլորը
նրան դժվար և հասկացնել, վորովհետև գերազանցորեն իրեալիտական
և նրա պատմահայեցողությունը, ինքն իր պատմական աղբյուրների ջեր-
մեղանոց յերկրպագուն և և նրա վերլուծական միտքը խոր պնդումներ
կատարելու հակում չի ցուցնում, այլ կրկնում և դատադրեային պատրաս-
տի ու ծամժմված հայեցակետներն ու զրտողությունները :

Իրեալիտ Ծերենցը սերահարված և միջնադարյան արժեքների վրա :
Ասացինք, վոր ավտատիրական իշխանությունն և մեր վիպասանի գե-
րակա գաղափարը : Միջնադարյան յեկեղեցին գրվատիքի առարկա չե նը-

բա մտո: Կրօնը--Մերենցի պատմահայեցողութեամբ--հասարակական գարգացման ուժեղ առաջնորդը գործոնն է: Հայի վարք ու բարքը, դեր-դասանի կազմն ու բարոյական հայացքները բացատրվում են հավատքի ավայրներով: «Հայաստանյայց առաքելական յեկեղեցու» գավանները Մերենցը տեղի անտեղի իր պաշտպանութեան տակ է առնում և միայն ջատագովում: Հաճախ նրա ջատագովութեանը վրէժն ալ ինչ է, բայց յեթե հակառակ բանակն անցած մարդու սեփեռյալ մտահոգութեան, վոր շարունակ գրագովում է թողած գոգմայի վարկարեկութեամբ և նոր ընդդրեկածի փտտարանութեամբ: Վերին աստիճանի հետ մղվող, մինչև անգամ գաղբի տպավորութեան և թողնում գեմոկրատ Մերենցի այն սուղերը, ուր նա Լուսավորչին բոլոր սրբերի մեջ յեղակի տեղ է հասակցնում և մի գլուխ այլանում Պետրոս առաքյալին, վորպես հոռուկական յեկեղեցու հիմնադրի. Լուսավորիչ, -- գրում է Մերենցը, --մեկ հատիկ և Սուրբերու մեջ. Լուսավորիչ այլ անպիտան ձկնորսներու* (յամ' Քրիստոսի աշակերտների) հետ կհամեմատե՞ս. նա մարդու գավակ Պարթեմանց ցեղենն էր» (յեր. 125): Ինչպես տեսնում եք, Մերենցի գեմոկրատիզմը, վոր իրը թե աղղեցութեան և գործել մեր նոր գրականութեան վրա, այն սրբերին և միայն «սուրբ» լինելու վկայական տալիս, վորոնք ազնվական են, այսինքն «ժողովրդական» ճաղում չունեն... Լա՛վ գեմոկրատիզմ է, մանավանդ վոր Մերենցի ամենասիրած հերոսը, այսինքն Թեոդորոս Ռիչուսին, իվերջո հայտնադործում է, վոր իր նպատակն է Հայաստանի գլխին մի բռնակալ կարգել: «Յես բռնավորք կհամարիմ», ասում է նա (յեր. 193): Ուսումնասիրողի մեջ մի շատ խորունկ տարակուսանք է ծագում. արդյոք վո՛րն է Մերենցի վախճանական իրեկայը--միանձնյա բռնակալութեանը թե ժողովրդապետութեանը: Տասնից ինը հավանականութեանն առաջին յենթադրութեան կոպմն է:

Այնուհետև ընթերցողին ենք թողնում գատել, թե մեր նոր գրականութեանն ինչ իրեկայական փոխառումներ պիտի աներ արեւմտահայ վիպասանից: Արդարեւ, մեր մյուս սոմանտիկներն ևս անհատապաշտ են, ժխտում են կասմողութեամբ, պատմահայեցողութեան մեջ իրեկայիստ են, ինչպես Մերենցը. բայց կարելի՞ չէ ապացուցել թե այդ հասկացողութեաններից վորեմեկ մեկը նրանք փոխ են առել Մերենցից: Վո՛չ: Վորովհետև ինքնուրույն թեորիական մշակում, հասակ, հետեւողական և համայնապարփակ աշխարհայացք Մերենցը չի հայտնաբերել, չնայած, վոր նա ավելի արոպազանդիստ է, հոռուր և նրանից ավելի շուտ կպահանջվեր մարի կառուցում, քան գեղարվեստական հորինում: Մերենցի աշխարհայացքի էական գարկերակն և սոսկ ինքնագոհ ազգամո-

* Ընդգծումը մերն է. Ա. Տ.

լութեանը, վորի հիմքերը խախտու են լստ ամենայնի: Վերաբերմունքը շրջապատի աղղերի նկատմամբ աղղեստիվ է, բայց միևնույն ժամանակ հեռուդականութեանից գուրկ է նույնիսկ իրրե աղղային քաղաքականութեան: Պատմահայեցողութեան մեջ իրեկայիզմը՝ իր կրօնական հիմնափորումով՝ հետ մղող աղղեցութեան և թողնում ակնբախ անհեթեթութեան հետեւումքով: Իսկ նրա աշխարհայացքի ընդհանուր գասակարգային հիմնադնքը, վոր վոմանք գեմոկրատիան են համարում, մի յերեկութ է, վորի մասին իմաստուն առածն ասում է՝ «անունը կա, ամանումը չկա»: Այդ մտավոր բազմով աշակերտներ չի կարելի ունենալ: Ընդդ է ասել Հայնեն թե «ղրականութեան մեջ, ինչպես և ամերիկյան անտառներում, գավակները խոտում են իրենց հայրերին, յերը նրանք դառնում են դառավայր»:

Հայտնի չէ մեր նոր գրականութեան պատմութեանից, թե Բաֆֆիի «Սենթի յերայր», վորի մեջ նա տվել է իր հասարակական-քաղաքական շատ համեատ իրեկայները, ինչքան գայրութ է հարուցել Մերենցի մեջ: Վերջինս վորովիված գուշել է Բաֆֆիի յերեկային թե՛ խենթը գուշես...

Բաֆֆին քաղաքական-հասարակական ի՞նչ իրեկայներ է արծարծել իր «Սենթի» մեջ, ինչ «ուսուպիական» ծրագիրներ է առաջադրել, վորոնց գեմ գայրագնել և «գեմոկրատ» Մերենցը: Յեթե ամփոփելու լինենք Բաֆֆիի ուսուպիան, վոր արտահայտված է գլխավորապես նրա յերկու գրվածքում, կստանանք հետեյալ համատու պատկերը.---

Հայաստանի գյուղերում պարզ նահապետական կյանքի փոխարեն տիրում է գարգացած քաղաքակրթութեան: Ի՞նչ արտահայտութեաններ ունի այդ քաղաքակրթութեանը: Ամենից առաջ տները, դպրոցները «յեւրոպական» են, յեկեղեցին--բողոքականների ձեւով: «Վո՛չ բեմ, -- ասում է Բաֆֆին, --վո՛չ սեղան, վո՛չ պարզարած տաճար, վո՛չ վոսկեգոծ պատկերներ, վո՛չ արծաթյա խաչեր և վո՛չ թանգապին գգեսաներ չկային այնտեղ... Մինչև անգամ դպրոցներ, սարկափագներ և տիրացուներ չէին յերանում: Յերկու պատկերներ միայն տեսավ (Վարդանը) այնտեղ մեկը՝ Հիսուս-Քրիստոսի, մյուսը՝ ս. Գրիգոր Լուսավորչի, յերկուսն էլ հասարակ, սեվ շրջանակի մեջ գրված: Ժողովուրդը նստած յերկայն նստարանների վրա՝ այր և կին միասին՝ յուրաքանչյուրն ունեք, իր ձեռքին մի փորթիկ յերգարան: Քահանան կանգնած ամբիսնի վրա, ս. գիրքը անջևր գրած, քարոզ էր կարդում: Նա իր հագուստով չէր գանազանվում հասարակ ժողովրդից... Ընդհանուր յերգն ու համայնական ազոթքն իրական կյանքի հարցերն են շոչափում: Այդ մարդիկ կրօնի վերացականութեանը հարմարեցրել են իրական կենցաղավարութեան պահանջների և պայմանների հետ»: Նրանց յերգերին յերգեհոնն էր ձայնակցում («Սենթ», յեր. 441-442):

Այնուհետեւ հետաքրքրական են Բաֆֆիի քաղաքական ու տնտեսական իդեալները: Բամանովի վիպագիրը «Կայծերի վերջում»^{*)} զձում և ապագա Հայաստանի հետեւյալ պատկերը: Քրդերն արգեն չքացել են կամ իրրեւ բանվորներ ծառայում են ազատամարտի հերոսներին: Վերջիններս դարձել են յերեվելի արդյունագործներ, նրանց գործարանների բանվորները յերջանիկ են, վորովհետեւ, ինչպես առում և Բաֆֆին, «արդյունէից մի վարչ մաս եւ ստանում»: Հաղթանակը տարել և «Հայաստանյայց յեկեղեցին», ազատ կարգերի չնորհիվ միտինարները հայածվել են: Վանում նստում և մի քրիստոնյա նահանգապետ («Կայծերի վերջը», յեր 31): Հերոսներից մեկը դարձել և կարվածատեր, հողը համայնացրել և և գյուղացիներին պարտավորեցրել և ժամանակի բնթացրում հողը «հետ գնելու» (նույն տեղ, յեր 18): Հերոսներից մյուսը, իրրեւ վաճառական, քարոզում և հետեւյալը. «Յէթե մեկանից յուրաքանչյուրը գտեր իրեն պճնատիրությունից և բավականանար տեղային գործվածքներով, այլ ևս մեր փողը Յեվրոպան չեր տանի, մեր փողը մեր յերկրում կմնար» (նույն տեղ, յեր 26):

Գալով Բաֆֆիի «կոտակերտիւ իդեալին», պետք և ասենք, վոր «Խենթի յերազի» մեջ հիշատակում կա այդ մասին. «Մեր գյուղում, պատմում և ապագա Հայաստանի գյուղացին, ինչ գործարան վոր տեսնելու լինեք՝ առանձին մարդու սեպհականություն չե... Գործարաններն ալտեղ պատկանում են գյուղական համայնքին, ամեն մի գյուղացի մասն ունի նրանց մեջ»: Որինակ պանրագործարանը: «Յուրաքանչյուր գյուղացի ներկայացնում և ալտեղ իր անասուններից ստացած կաթը, և ընդհանուր արդյունքի բաժանման ժամանակ նրա համեմատ ստանում և կամ պանիր, կամ արծաթ» («Խենթ» յեր 353):

Ահա ընդհանուր գծերով Բաֆֆիի «սոցիալական ուտոպիան»: Մեր քննադատական գրականության մեջ այն կարծիքն և հայտնվել, վոր ուսս գործիչ Չերնիշևսկու «Что делать» վեպի^{*)} գաղափարական ազդեցությամբ և հորինել Բաֆֆին իր ուտոպիան: Այդ պնդումը ձեւակաւ նապես ճիշտ լինելով՝ սխալ և ըստ էության: Ամենից առաջ հենց այն տեսակետով, վոր Չերնիշևսկու «Յերազր» կատարելապես մի սոցիալական ուտոպիա չէ, այս կամ այն չափով նման թոմաս Մորի, Կամպանելլայի, Մորրիսի, Ֆուրիէի, Կարելի, Բեյամիի և այլ ուտոպիստների գաղափարներին, մինչդեռ Բաֆֆիի «Յերազր» դուս քաղաքական բրնույթ ունի, սոցիալական տարրը հետին պլանի վրա չէ գրված, վորովհետեւ հայ վիպասանը մասնավոր սեպհականատիրական կարգերի

*) Կրտսեակներ և Արհամեղը վկայում են այդ վեպի ուժեղ ազդեցության մասին ուսս և Անդրեովիասյան յերիտասարգության վրա (տե՛ս «Записки революционера», стр. 271, և «Անցյալի հիշողություններից»):

չերմ ջատագով և և թշնամի սոցիալիզմին (տես, որինակ, նրա «Հայ կինը և հայ յերիտասարգությունը», յեր 179-180): Չերնիշևսկու «Յերազր» իրագործումը սրահանջում և սոցիալական հեղաշրջում, համալիարհային կատակիլիզմ, իսկ Բաֆֆիինը—տանկական բունակալության վերացում, «Ազատ Հայաստանի» գաղափարի իրականացում: Հայ վիպասանին հետաքրքրում էր Հայաստանի քաղաքական ապագան, նահապետական կացության փոխարինումը «խակական քաղաքակրթությամբ», Հայց յեկեղեցու բարենորոգությունը, հայ-քրդական փոխհարաբերության հեղաշրջումը հողուս հայերի, պարոցական գործի դարգացումը մի այնպիսի ուղղությամբ, վորի իդեալը պետք է լիներ «լավ զինվոր և լավ յերկրագործ» պատրաստելը: Բաֆֆիի այդ բոլոր «իդեալները» ն. Չերնիշևսկուն՝ իրրեւ ուտոպիստ սոցիալիստի՝ տղայական կարող էլին թվալ: Պատճառը պարզ է: Ռուս գործչին հրապուրում և հետաքրքրում էր կապիտալիստական հասարակարգի տապալումը և սոցիալիստական համայնքի հորինումը, մի համայնք, ուր աշխատանքը թալանի չպետք է յենթարկվի, հետեւյալս վերանալու յե «հավելյալ արժեքը», մի համայնք, ուր կինը պետք է փաստապես ազատագրվի, մեքենայական անտեսությունը պիտի գյուրացնե աղբյակերովը, և այլն, և այլն (տես Н. Чернышевский, «Пол. собр. соч.», т. IX, стр. 251-265):

Բաֆֆիի «ուտոպիան»՝ վոր իր չափավոր բեֆուրմներով բուրժուական իդեալներից դենը չի թեւակոխում, վոր քաղաքական բաժնում Բերլինի վեհաժողովի 61-րդ հոգվածի սահմաններից չի յեղում՝ արդ խղճուկ բարենորոգչական ծրագիրը սարսափի և սողել Մերենցին և դրանով իսկ ցայտուն կերպով մերկացրել վերջինիս դեմոկրատիզմի ծայրաճակողմյան բնույթը, նույնիսկ կղերական-ազնվապետական գեմքը, պոկելով նրա յերեսից «հետեւյալական սամկալարության» գլմակը: Հիշենք վոր մի ճառի մեջ Մերենցը յերկրագործության տարածումն և ներրոգում ինտելիգենտ հայերի մեջ, վորպես կրոնական զգացմունք ամբացնող մի միջոց...

III

Անցնենք յերկրորդ խնդրին, այսինքն թե ինչ գրական արտահայտություն և ստացել Մերենցի հիշյալ աշխարհայացքը, սերիչ խոսքով՝ ինչ գեղարվեստական ձեւեր ունի նա:

Սկսենք լավագուսն վեպից՝ «Թորոս Լեվոնիից»:

Գրական բամանովմն իր բոլոր բացասական հատկություններով ծայր և առել մեր հեղինակի ինչպես մյուս, այնպես էլ այս գովված յերկում:

Ամենից առաջ նա վեպի մեջ մտցնում է ժամանակակցություն, այսինքն միայն չեղում է, վոր ինքը պատմում է անցած գնացած բաների մասին և մի գլուխ անցյալ ու ներկա բունդրոսի կերպով համեմատելով և գրազված, ինքնին վերացնելով վրպական իլլյուզիան և պատմական պերսպեկտիվան կամ «պատմական արամադրությունը» (վերջինս Ֆ. Մերինգի տերմինն է, ինչպես ասացինք) :

Չկարողանալով վրպական գործողություններ ստեղծել, նա հաճախ դիմում է յերազների ու յերկարաձիգ մենախոսությունների ոգնություն. այդ միջոցով ձգտում է լուսարանել մերթ ապագան, մերթ հարսների անցյալը: Այդ բոլորը բովանդակական հանրահոգակ պրիմներ են, բայց, ինչպես ասել և ինչինսկին, գրական ուղղությունը գրոշի արժեք չունի, յեթև նա հեղինակի գլխում գոյություն ունի և նրա արյան մեջ չի մտել:

Այդ և պատճառը, վոր նրա վեպում ավելի դատողություն կա, քան պատկերացում: Նկարագրերից խուսափում է: Կնում է ալոպիսի մի վերնագիրը. «Կ. Պոլիսը 1145 թվականին», սկսում է խոսել թուրքերի և քնեած կայսրների մասին, բայց վո՛չ մի կոնկրետացում, վո՛չ մի մասնայական կամ կենցաղական նկարագիր չե տալիս: չի պատկերացնում վո՛չ մի կենդանի դեմք, վոր ինքներս անձամբ համոզվինք նրա ասածին ու պնդածին: Չափազանցումները նա փոխ և առնում ավանդական պատմությունից, վորի վրա շարունակ հենվում է ընդարձակ մեջբերումներով, և միամտորեն պատմում է հրաշքի նման բաներ. նրա հերոսները, գերբնական ելակների պես, առ վոչինչ են համարում ամեն մի խոչընդոտ, մենմենակ կոտորում, վոչնչացնում են ահագին թվով թշնամիներ, ինչպես մեր ժողովրդական վեպի գլուցագունները կամ Սորենացու Տորք Անգելը, ինչպես պարսկական եպոսի փեսիկները կամ հինբուրգունդական նիրելունգները:

Չնայած իր դատողական հակումին, չնայած վոր նրա ձիրքը «բացիտնայիստական» բնույթ ունի և նրան պակասում է «ինտուիցիան» (վիզասանների յերկու տարբեր տիպ՝ ըստ Հարտմանի-բացիտնայիստական և ինտուիտիվ), չնայած վոր նա մեր քննադատների կողմից «արամարանդեն մտածողի» վկայական և ստացել, այնուամենայնիվ դատողությունը Մերենցի մոտ իսկապես միայն ձևական արժեք ունի, վորովհետև նա ամենեվին համոզել չգիտե: Առանց վորեփե պատճառարանության և նախապատրաստություն՝ անցքերը նրա գրվածքում պարզանում են գիպվածորեն, հանկարծական հանդիպումներով լուծվում են վրպական գեղարվեստներն ու կնճիտները, կամ, այլ խոսքով՝ փոխանակ «միջին յերեվոյիթներին» (Կ. Մարքսի տերմինն է), նա տալիս և արտասովորն ու բացառիկը: ձիչա է, այդ հատկությունը Փրանսիական բովան-

տիկ վիկտոր Հյուգոն էլ ունի, նա յեւ և սիրում բացառիկն ու արտասովորը, նա ևս առանձնահատուկ լուսավորություն և հանգես բերում, վոր իրերին տալիս և որիցինալ բնույթ, կյանքի «միջին յերեվոյիթներին» նկատառումով՝ հազվադեպ յերանգավորում: Որինակ՝ Բվադիմոգոյի («Նոտը Դամ դ Պարի») և ժան-Վալթանի («Թշվառներ») փոխակերպությունները: Նրա յերկերում ևս գերիշխում է վոչ թե հոգևորանական, այլ բարոյական մոմենտը: Բայց և այնպես Հյուգոն կյանքը չի դարձնում առասպել կամ հեքիաթ, այլ կանգ և առնում նրա առանձնապես ուրույն և աչքի ընկնող կողմերի վրա, համոզված, վոր բովանդեմը կյանքի դիտողութան մի ձեպ է և վոչ թե կյանքի մոտացում կամ սոսկ ֆանտաստիկա. այդ պատճառով էլ նրա նկարագրերն թեև իրականորեն պատկերավոր չեն, բայց դոնե պերագանցորեն եմոցիոնալ են:

Փանտաստիկան, այն էլ դյուցադներգական ֆանտաստիկան է միակ ձևը, վորի պրիզմայի միջև Մերենցն անց և կացնում իր գեղարվեստական պատկերները: Նա չի խուսափում դյուցադն անվանել իր հերոսներին: Թեոթիպես դյուցադնական բնույթ ունի, որինակ, Մերենցի նկարագրած սերը, վոր ժխտում է ամեն պայմանականություն, արվյալ ժամանակի և տարածության ամեն կաշկանդում:

Դյուցադուն է նրա զլխավոր հերոսը-Թորոս Լեոնին, վոր ամեն տեսակ դրական հատկությունների մի մթերանոց է և վորին խորթ է իսկապես մարդկայինը, «գերագանցորեն մարդկայինը»: Հենց վոր նա յերեվում է Կիլիկիայում, ասես, մոգական գավազանի մի հարվածով, ժողովուրդն ընդոտ վտոքի յե կանդնում է փառքի ճամբան բացում «Հերոսի» առաջ: Պատճառարանություն չկա: Ժողովուրդը գունդագունդ պալիս մտնում է Թորոսի դրոշակի տակ, վորպիտե տեղ նա «գորավոր կողմվածք», «վսեմ նայվածք», «համատու և ազդու խոսք», «կերուխումի ժուժկայություն» ունեւ... Մերենցը հորինել է իր հերոսին, վորպես «քրիստոնյա միտպետի» կատարելատիպ նրան պարզեփելով այն բոլոր հատկությունները, ինչ վոր սիրելի յեն իրեն: Չնայած վոր Թորոսը մի իսկապիպ դյուցադուն է, բայց միաժամանակ իր մեջ ամփոփում է վրպագրի չափավորության կոնսերվատիվ պատվիրանները: Նա իրոք Ֆելիստերության մի ասպետ է: Բացի այդ՝ նրա հայացքների և գործի մեջ Մերենցը չի կարողացել ներգաշնակություն մտցնել: Մերթ հանգես և պալիս իրրել մի «սուրբ մարդ», վոր ժխտում է ամեն խստություն, ամեն մի բռնություն, մեծահոգի յե թշնամու նկատմամբ, հաճախ ի մնա իր գործի՝ ձևոքն ընկած թշնամուն ներում և արձակում է, մերթ նա խրախուսում է ծովահնությունը և հունաց յեկեղեցիների կողոպուտը (յեր. 187, 182): Յեղիտական այն չկուան, վոր անցել է

15-8222



Ծերենցը, խոր հեաք ե թողել իր այս հերոսի բնութագրի վրա: Մի սրի- նակ բերենք, թե ինչպես իր սիրած հերոսին նա Տարալուֆ ե դարձրել և այսինքն մի մարդ, վոր հնազանդ ձեվանալով՝ հետապնդում ե իր նպա- տակներին:

Հունաց Անդրոնիկոս գորավարը մտնում ե գորքով Կիլիկիա՝ Թորոսի դեմ գործելու համար: Թորոսը իբր թե աշխատում ե նրա հետ բանը ի աղաղությամբ վերջացնել ե իր այդ դիտողությունը պատճառաբանում ե այսպես. «ով վոր ժողովրդոց առաջնորդ ե իշխան ե, պեաք ե մարդ- կանց, աստձո ե իր խղճմտանքի առջև լավ քննե ամեն բան ե արդարու- թյուն գործե: Մենք մարդկային արյան ամեն մի կաթիլի համար պա- տասխան պիտի ասնք աստձո, անոր համար մեր փառասիրությունն ու մեր անբարտապանությունը պեաք չե վոր մեզի առաջնորդ ասունք, այլ մեր ազգին ոգուաը...» (յեր. 171): Բայց նկատելի չե, վոր Թորոսի այս համոզմունքը վոչ այլ ինչ ե, բայց յեթե իր աստձուն խաբելու մի միջոց: Այդ միտքն արտահայտելուց հետո՝ Անդրոնիկոսի մոտ խաղա- բարար պատվիրակություն ե ուղարկում, ինքն առաջուց վստահ լինե- լով, վոր հուշն գորավարը պիտի մերժե իր առաջարկը: Ուրեմն, պատ- վիրակությունն ուղարկում ե հուշն գորավարին մոլորեցնելու համար, նրա մեջ այն սխալ համոզումն առաջ բերելով թե՛ պատվիրակության առաքումով Թորոսը ցույց ե տալիս իր թուլությունն ու անպատրաստու- թյունը, մինչդեռ իրեն նա շատ հզոր ե պատրաստ եր համարում: Այն- պես վոր Թորոսն իրոք կոխվ ե արյունահեղություն ե ցանկանում, բայց աշխատում ե մի հարվածով յերկու նապաստակ՝ վորոսը՝ մոլորեցնել իր աստձուն այն մտքով, վոր ինքն անպարտ ե սկսվելիք կովի համար, մոլորեցնել նաև Անդրոնիկոսին՝ թույլ ե անպատրաստ ցույց տալով ի- բեն ե նրան կովի դրդելով: Թորոսն իր այս մաքիավերական գործերա- կերպն հատկանշում ե հետևյալ խորհրդածությամբ. «Անդրոնիկոս վոչ միայն խաղաղություն պիտի չընդունի, այլ մեր խոնարհական դես- պանությունը մեր աղարության նշան պիտի համարի, ե մենք անպարտ կմեանք աստձո առջև այն արյունն, վոր պիտի թափի» (յեր. 172):

Մյուս հերոսների բնութագրին նա մեծապես տարակույսների տեղիք ե տալիս: Առասպելական, չպատճառաբանված ե չլուսաբանված հերոս- ներ են նախ՝ գաարյուն հուշն բժիշկը, վոր ամեն կերպ ոգնում ե Թորո- սին՝ իր հարենակից հուշներին կոտորելու սխրագործության մեջ, ապա՝ Անարզարայի իշխանը, վոր իբր թե բոնակալի տիպար ե. ժողովրդին սաստկապես տանջում ե, բայց իր առաքինի ազնվանից շատ ե ահիածում, այնուհետև մատերի արանքով ե նայում իր կնոջ ե յեպիսկոպոսի սի- բահարության վրա: Հետաքրքրական ե գուտ գրելակերպի տեսակետից այն վերաբերմունքը, վոր ցույց ե տալիս հեղինակը դեսիլ այդ յեպիս-

կոպոսը. հրաժարվում ե վերջինիս մասին խոսել, վորովհետև նա ան- արժան ե, այսինքն արատավոր ե (յեր. 160): Ուրեմն, Ծերենցի կար- ծիքով, վիպագրությունը պիտի դրադվի միայն ե յեթ արժանավոր, անարատ մտքդեանց նկարագրությամբ, մի մտայնություն, վոր առա- ջին անգամ Ծերենցի մեջ նկատել ե ե ծաղրել յերդիծարան Հակոբ Պարոնյանն իր «Մեծապատիվ մուրացկանները» մեջ. —

«Ի՛նչ անուշ բան ե, ասում ե Պարոնյանը, թերությունները հավա- քել միամիտ մարդերու վրայն: Խորամանկները... այնքան կկեղծեն ի- բենց թերությունները, վոր անոնց հավաքիչները կզվարեցնեն... ե յերբ ազգային նշանավոր, հանճարեղ ե հերանուշ Ծերենցն ասոնցմե մին նկարագրելով անբնական անձ մը ներկայացնե՛ ամեն կողմե կրասրվի թե Ծերենցը տակավին մանուկենց ե անձկր սոնեղձելու արհեստին մեջ, թե միևնույն անձին վրա Ադամն ե Նեոյր, սատանան ե հրեշտակը, Ջոյիլը ե Հոմերոսը, արականը ե իզականը միանգամայն կներկայացնե: Ի՛նչ հանցանք ունի ճերմակերես Ծերենցը՝ յերբ իր ներկայացնելիք անձերը խորամանկ են... Այո, Ծերենցը կներկայացնե անձերը, վո՛չ թե ինչպես վոր յեն, այլ ինչպես վոր կերվին...»:

Թորոսի յեղբայր Մլեհը, վոր մի շատ հետաքրքրական ե որիցինալ տիպ ե ու մեր պատմության պրոբլեմներից մեկը, նկատի առնելով մանավանդ նրա հարածանքը յեկեղեցու դեմ ե ներհակությունը նախա- բարական կազմի նկատմամբ, — այդ Մլեհը մնացել ե առանց լուսաբա- նության: Ծերենցը նրա դեմ կոկնում ե ավանդական պատմության, այսինքն շահագրգռված կողմի բոլոր թունոտ մեղադրանքը՝ առանց ջան ու ճիգ գործադրելու հողերանորեն մի ամբողջական դեմք ստեղծել, նրա լստ յերեվույթին հակասական արարքները մի ընդհանուր աշխարհա- յացքի ե ինքնամիտի բնավորության մեջ լուծելով:

Ծերենցի ստեղծագործական յերեվակայության ե հիշողության իրբե մի նմուշ հիշատակենք հետևյալ փաստը: Գրեթե վեցի վերջում (Լջ 222) հայտնում ե, թե Սարգիսը՝ Թորոսի գործակիցներից մեկը, ուրախ ե հանաքչի մարդ ե: Դա մի հանկարծական հայտնագործություն ե, վոր գարմացնում ե, մինչևի անգամ ապշեցնում ե ընթերցողին, վորովհետև Սարգիսն իր բնավորության այդ դժերով վոչ մի պատկերացում չի ստա- ցել վեպի մեջ ե վոչ մի փաստով:

Բելլինսկին այդ տեսակ վիպասաններին «բելլետրիստ» եր անվանում, տարբերելով նրանց գեղարվեստագետ-պատկերացնողներից: Բելլետրիստ- ար հետաքրքիր պատմում ե յորինակ՝ Գրիգորեվիչ, Շպիլհայեն, (մեղա- նում՝ վ. Փախազյան), բայց — հեղնում ե Բելլինսկին, — հաճախ մոտանում ե, վոր իր հերոսին սկզբում չիկահեր ե ներկայացրել ե վերջում սխալ-

մամբ սեվահեր գարձրել,--մի Տոլստոյ կամ Մուրասն (մեղանում նար-հոսր) յերբեք թույլ չի տա նման սայթաբում :

Անցնենք «Յերկուսիք» .

Գրական այն ձևերը, վոր տեսանք «Թորոս Լեվոնի» մեջ, ստերեոտիպ կերպով կրկնվում են այս վեպում ևս : Միշտ նույն տրամաբանոր, միշտ նույն «փոճի բոմանտիզմը» :

Այստեղ ևս յերգաները, տեսիլներն ու մենախոսությունները գալիս են մերթ ապագան պարզելու, մերթ հերոսների անցյալը լուսարանելու : Միջնադարյան կյանքի ու կենցաղի նկարագիրներեց խոստովում է, հաճախ վեպին տալով դեպքերի համատեղ արձանագրության բնավորություն : Հանկարծական հանդիպումներն ու զիպվածականությունը, ինչպես և կողմնակի դատողություններն իրրև միջոցներ են գործադրվում վերական տեխնիկայի պակասը լրացնելու համար : Ծերերնցն էլ Սվիֆտի պես կարող է իրրև գրող իրեն նմանեցնել այն հյուրասեր մարդուն, վոր իր տունը յեկամ հյուրի առաջ փոռում է այն ամենը, ինչ վոր ունի՝ առանց հարցնելու թե՛ այդ բոլորն ի միտին ուտել և մարսել կարելի՞ յե . .

Չափազանցություններն ու հրաշապատում հանդամանքներն աչք են ծակում, վեպը դարձնելով կատարյալ հեքյաթ, լավազույն դեպքում՝ դյուցազներգություն : Հույները և արարները շարունակ պարտվում են մի բուն հայեր միայն հողթանակ են տանում բազմաբայ թնամուղեմ : Վեպի մեջ մտցնում է ժամանակակցություն . հիշատակում է բազմիցս իր պատմական այդպուրները, աշխատելով այդ կերպ համոզել դարձնել իր խոսքը : Բնության նկարագիրները հակիրճ են և պրոզայիկ : Ամեն բայրափոխում կրկնողություններ և անում և իսպառ տաղտկացնում : Թեև սերն ամեն պայմանականությունից ազատ և համարում, բայց նրա սիրահարները ձգնավորի ամբասիբ վարք են ցուցնում սիրո բնագավառում . իրար համբուրում են այնպես, ինչպես «հավատացողը խաչի նշանը», վորպեսզի սերը «նյութականության» չիջեցնեն (յեր 307) :

Գալով հերոսների բնութագրին՝ պետք է ասենք, վոր վեպի վերնագիրն ավելի շուտ լինելու յեր «Ատենարանությունը», քան «Յերկուսիք» : Անթիվ, անհամար յերկայնաձիգ ճատեր, տեղի-անտեղի արտասանված, առանց վորեկ ներքին անհրաժեշտության : Ասես, Ծերերնցը ցանկացել է հոնտորության ձեռնարկ գրել և փոչ թե պատմական վեպ : Հերոսները հոգեբանության մասին խոսք անգամ չի կարող լինել : Իշխում է անամենագատության սկզբունքը անհրաժեշտության գաղափարի դեմ . հերոսների արարքները չեն պատճառարանված, շատ անգամ նրանք հակասում են տարրական իսկամտության պահանջներին : Ի՞նչ կասեք այն մարդուն, վոր շարունակ կոպում է հույների դեմ, նրանց գորքերին միորինակ ջարդ ու փշուր և անում, ապա առանց այդ և այլի՝ դնում նրանց բանակը և իր

ճառագությունն առաջարկում հույն գորավարին ի հարկե նրան կապում և բանտարկում են : Այդ հերոսի անունը Գուրգեն է : Ի՞նչն է նրա մարի այդ իսկամտան պատճառը : Գուրգենի անձնությունը հարկավոր է յեղեյ Ծերերնցին, վորպեսզի նրա ազատազրությունը կատարել տա Հեղինե ի ձեռքով, վոր Գուրգենի սիրուհին է հանդիսանում և ոճտված և ամեն կատարելություններով . նա կին չէ, այլ իսկական գերմարդ : Վեպի մեջ փոչ մի տեղեկություն չկա, վոր այդ կինը մի արտասովոր եյակ է . բայց հենց վոր նրա ամուսինը մեռնում է, հանդես է գալիս, վորպես անձնան կառավարչուհի, իսկ յերբ սիրահարը բանտարկվում է, հանկարծ նա դառնում է ամենակարող և բնդունակ զիպվածա, մի կանացի ներքնագրեստով Թարսյան, վորն հաջողեցնում է սիրածի հրաշալի ազատությունը :

Նույն հրաշապատում հանդամանքն ունի և Գուրգենը : Մերթ նա հանդես է գալիս իրրև մի բիրտ զինվոր, մերթ-- բրիտանական անհիշաչարության և ներդրամության անհարին մարմնացում : Մերթ նա համեստ է իր մասին լուր մարդու խորհրդավոր կերպարանքով, մերթ դառնում է թեթևամտորեն պարճենկուտ, ինքնազով և շատախոս . «Յերկուսիք», --ասում է Գուրգենը, --յե թնամյայ վրա կհարձակելի . ամբողջ գունդեր (?) իրրև փոթորկե պաշարյայ իմ սուրիս առջև կարսելին, կչփոթեյին, խանտափնդոր կիխաչելին» . . .

Պատկերացման շատ քիչ կարողություն ունի Ծերերնցը : Ծարունակ կրկնում է, վոր հայ նախարարները փչացած են, մեղկ, անտակ կյանք են վարում, գինարբունների զվարճություններն են նրանց կյանքի միակ նպատակը : Բայց փոչ մի պատկերով (ինչպես այդ անում են Սենկևիլիչը և Լիտտոնը հոռմական ազնվականության անկման նկատմամբ) մեր վիպասունը չի կարողանում հաստատել իր սնդումները, վորանց մնում է հավատ բնմայել առանց ինքնիր համոզվելու : Սրա մտտ էլ մի թույլ կաթոյկուս կա, ինչպես և Մուրացանի՝ «Գեկորդ Մարգարետունու» մեջ : Մինչպես Մուրացանը զգալ և տալիս թույլ մարդու ներկայությունը, Ծերերնցն իր անգորությունը հազեցնում է ճառերի տարափով : Պատկերացման չզուլությանը պիտի վերապրել նաև այն հանդամանքը, վոր հայածարեմատահայ վիպագիրը շարունակ խոսում է արևելքի մասին, բայց արևվելյան յերանգափորումից գուրկ են նրա եջերը վորոնք միանգամայն թափուր են այն դունագեղ պատկերներից, վորոնցով լեցուն են Մուրացանի և Բաֆֆիի պատմական վեպերը :

Վեպի գլխավոր հերոս Հովհանր՝ Թորոսի նման, բոլոր կատարելությունների մի շտեմարան է : Նա դյուցազներգության հերոս է : Թորոսից տարբերվում է միայն նրանով, վոր Հովհանր հրաշագործ է բանացի

համաստով. այդ բնօնցի գյուղացիին բժշկում է ամեն տեսակ հիվանդներին «Քրիստոսի նմանողութեամբ» . «Յեւ միշտ այսպիսի պարագաներու մեջ (այսինքն բժշկութեան միջոցին) , — գրում է Ծերենցը , — կտեսնվիր , վոր Հովնանը կոչեւորվիր , աշվները կձգտեյին և այդ գորավոր մարդը մեծ հողնութեան մը կիմանար այդպիսի դիպվածներու մեջ ու խոնարհարար կրտսեր թե կզգամ Քրիստոսի խոսքին ուժը թե՛ «գորութեան յիւ հինն» (յեր . 29--30) : Չորութեան այդ փոխանցումը կատարվում է վոչ միայն կենդանի մարդկանց միջև , այլ և մեռյալը կարող է գրութեան հաղորդել կենդանի մարդուն : Այդպես՝ Հովնանը վոչ միայն կենդանութեան որոք , այլ և «հանդերձյալ աշխարհից» ազդում է յուրայիններին «Հոգեզարստի» նմանողութեամբ . «Գուրգեն նշմարեց այդ լուսազգեստ մարդը , —ասում է Ծերենցը ,— Հովնան ինքն եր՝ Հովնան հրեշտականման . հազրի թեպէր տարածեց և «Հովնան՝ , Հովնան» գոչեց , ահա՛ տեսիլն անհետ յեզով : Բայց իր շուրջը մնաց նրա գորութեանը և բանոյալը նոր կորով մը ստացավ , միշտ հույսը աստուծո վրա դնելով» (յեր . 405) :

Անցնենք «Թեոդորոս Ռշտունու» :

Նախորդ վեպերի պես՝ սա ևս մի հիմնական պահասութեան ունի : Այդ այն է , վոր նրա մեջ աշխարհագրական միջավայր , տեղայնութեան չկա : Յեթե հայկական հատուկ անունները և հայոց պատմութեան հաճախակի հիշատակումները մեջտեղից վերցնենք և փոխարենը դնենք ոտար անուններ և արտաքին ազդարարներից ստեղծեցրեւորումներ . — Ծերենցի այս վեպն էլ յայտն փոշին չի կորցնի : Չնայած վոր սա մեր վիպագրի վերջին յերկն է , բայց և այնպես վիպական տեխնիկայի տեսակետից ավելի պահասավոր է , քան նախորդ գրվածքները : Չկարողանալով պատմական փաստերը վիպական գործողութեանները դարձնել՝ նա հարկադրված է վաղաճի՝ ողնութեան գիմել : Յեւ հիբրավի ՆՂ դրուրը մի միջանկյալ պատմութեան է . «ով ուզում է կարդա , ով չի ուզում թող չկարդա» , ինչպես խորագրել է Ղ . Աղայանը իր «վեպերից» մեկի խոչոր մի հատվածը (տես նրա «Յերկու քույր») :

«Թեոդորոս Ռշտունու» հերոսները նախորդ վեպերի կրկնակը կամ , յեթե կուզեք , պատճենն են : Թեոդորոսը — Հովնանն է , Չովնան հայրիկը — Բարկեն հայրիկն է , Թեոդորոսի կինը «սովորական կին չե» (յեր . 85) , այլ նախորդ վեպերի կանանց նման . — վորոնք այսպիսի քրմութեանը են և վոչ թե ստորյա մարդիկ . — վարչական մի հարվողյուտ քանքար է : Գրական պրիմիտիվն էլ նույնն են : Տեսանք , վոր «Թորոս Լեվոնի» մեջ պատիվ չեր համարում խոսել սիրահար յեպիսկոպոսի մասին , վորովհետև նրան փաստ մարդ էր համարում : Այստեղ էլ խուսափում է հույների կյանքը պատկերացնել , վորովհետև «փուչ» է համարում այն : Յեթե րատիպված է խոսել հունական կենցաղի մասին , ընդհանուր տեղիներից դատ՝ ուրիշ հայտնագործութեան անել չի կարողանում : Ավանդական

պատմութեան տվյալները կրկնվում յեն ստանց նոր լուսարանութեան : Այսպես որինակ՝ Հունաստանում ապրած և բազմաթիվ պատերազմների մասնակցած դորավարը գտնում է յեպիսկոպոս , ապա՝ կաթողիկոս : Ծերենցը խուսափում է վորեւե մեկնութեան տալ ասելով . «Չանագան և իրեն միայն հայտնի պատճառով քահանայական կյանքն ընտրելով՝ քաշվեր եր աշխարհք» (յեր . 118) : Սա հիշեցնում է Պ . Պոռչյանի խուսափուկ ձևը , յերբ նա պիտի խոսե կնոջ մասին , բայց դանց է անում պատճառարանելով թե՛ կին պատկերացնելու համար պետք է կին ծնված լինել (տես «Հացի խնդիր» , յեր . 93 և 123) :

Ասացինք , վոր նախորդ վեպերում նախարարական անկման պատկերներ չկան : Այս յերկում հեղինակը պնդում է , վոր հայ «ժողովուրդն ևս» «անտանացյալ և խելագարյալ եր ի բոնութեանց և ի դրկանաց» : Գարձյալ պատկերացում չկա , գոնե լինել այն շափով և այնպես , վորքան և ինչպես դա կա՝ լորդ Լիտտոնի «Պոմպեյի վերջին որերը» պատմական վեպի մեջ հոգիմեական «ժողովուրդի» մասին , վորպեսզի ինքներս համոզվեյինք և վոչ թե հավատ ընծայեյինք վիպասանի պնդումներին :

Հրաշագրտում էլ մեկնոր և չափազանցութեանները , վոր տեսանք նախորդ վեպերում , այստեղ ևս իրենց տեղն ունեն : Հրաշքի նման մի բան է , որինակ , Գամակոսում չորս տարի մնացած յերեք հայ դերիների փախուստը , նրանց վրեժառութեան ձևը , պալատի հրկիզումը , ապա բազմաթիվ արարական հրոսախմբերին դիմադրելով՝ Հայաստան վերադառնալը : Գերբայներից մեկի՝ Սուրենի վերադարձի պատմութեանը մի իսկական «Վոլիտական» է : Այդ բոլորը բացի զարմանահրաշ լինելուց , բացարձակապես ավելորդ մի բալլաստ է վեպի համար :

Վեպի զլլսափոր հերոսը՝ Թեոդորոս Ռշտունին , մյուս զլլսափոր հերոսների կրկնողութեանն է : Գործելակերպն ու մտածողութեանը նույնն են . հոգեբանական լուսարանութեաններ դարձյալ չկան : Այս ազնվական իշխանավորը «դեմոկրատ» Հովնանի մեղադրանքներն է կրկնում նախարարութեան դեմ՝ վոչ մի գոտակարգային նախապաշարում չունենալով : Մենք տեսանք , վոր Ռշտունու իրեայն եր Հայաստանի գլխին մի բռնակալ նստեցնել . «յես բռնավորք կհալնեմ» ասում եր նա : Իսկ այժմ տեսք ինչ — քի՛չ է մնում ասելք . — «սոցիալիստական» ճառ է ստում , «Աստված չի կրնար մեր նախարարաց . . . հանցանքը տուժել տալ անմեղ ժողովրդյան , վոր մեր լուծը կտանի , վոր դիմա կանուցանե , մեր պերճութեանց , մեր քմահաճոյից , մեր անառակութեանց կծառայե , և գոր մենք մեր գոռալ ամբարտաւանութեան մեջ անաղատ կանխանենք արհամարհանք և իր համբերող ուսոց վրա բեռ բեռան ավելացնել չենք դադարիր անխղճաբար : Այո՛ , կզա անշուշտ որ մը , որք ապագա դարուց սովերներու մեջ ծածկյալ , այն որք ուր մեր նախարարական անունները անհետ , աներ-

վույթ լինեն Հայաստան աշխարհի վրային և ազատն ու անազատն ի մի ձուլլայ բոնության մուրճերու հարվածներին միարան և միասիրտ թաթափեն շղթաները և յեղբայր գիրար անվանեն» :

Այդպիսի անտեղի, անհամոզիչ և հակասական ճառերով լիքն են Ծեբենցի վեպերը, ճառեր, վորոնք հղեապես յերբեմն այնպես «անկապ են, ինչպես ճաշարանի հաշիվը», և հալաա չեն ներշնչում ընթերցողին, վոր գլխե արեմտահայ վիպագրի ըմբոստացումը Բաֆֆիի չափավոր սոցիալական գաղափարների դեմ, ինչպես տեսանք :

Դյուրին կերպով ճարտասանելով՝ Ծեբենցը միանգամայն անճարակ և հանդիսանում վորեն գեղարվեստական կամ հոգեբանական խնդիր լուծելու : Այսպես որինակ՝ ինչպես յեզակ, վոր արարացոց վոխերիմ թըշնամին և հույների համհարզը հանկարծ թողեց վերջիններին և իր սուրբ գրեց ամիրապետի տրամադրության տակ—այս կարևոր խնդիրը, Ռչտոնու ալս դարձր, վոր միևնույն ժամանակ վեպի ելական կորելցն և կամ, ինչպես ասում են, «մեխն» և, մնացել և առանց խոհական լուսարանության : Միևնույն ժամանակ թ. Ռչտոնու և Ներսես կաթողիկոսի հակամարտությունը, վոր սոցիալական ուշադրով մի յերևույթ և և ավատատիրական պայմանների անտեսական հիմքերը բնորոշող մի թեմա, Ծեբենցը հիշում և հարեանցորեն՝ մի քանի տող նվիրելով միայն այդ գրծտությանը (յեր. 227) :

Մեր նոր գրականության պատմության մեջ կարծիք և հայտնված, վոր Բաֆֆին ազդված և Ծեբենցի գեղարվեստական պրիոմներից : Կարծում ենք մեր վերլուծումից ակներևարար պարզվեց, վոր Ծեբենցն ինքնահատուկ գրական ձևեր չունի, այլ նրա պրիոմները ըմանտիկ գլոբոցի րևիալուր ատրիբուտների արձագանքներն են միայն : Այնպես վոր Բաֆֆին հատկապես Ծեբենցից փոխառություն անելու հարկադրանքի առաջ կանգնած չալտի զգար իրեն, մանավանդ վոր տեսանք թե արեմտահայ վիպագրի յերկերը վորքան սակավ տեղախություն ունին : Ուրեմն, մընում են միայն արտաքին ձևերը, ակնիկան, վոր յեվրոպական բոմանտիկների մոտ— Հյուգո, Դյումա, Սյու, Չանգ, Սկոտ—կատարելության և հասած, իսկ Ծեբենցը գործադրում և անհաջող կերպով այնչափ, վորքան նրան արված և մի համեառ ձերք, վոր ավելի ճարտասանական բնույթ ունի, քան գեղագիտական : Յեթե մի բուսի յենթագրելու լինենք, վոր Ծեբենցն ազդել և Բաֆֆիի վրա, պիտի խոստովանենք, վոր այդ ազդեցությունն ավելի բացասական, քան գրական կերպարանք ունի, այսինքն ինչ վոր պակասավոր և Ծեբենցի մոտ, Բաֆֆին ևլ նման պակասություններ ունի, որինակ, փակազժի ոգնության դիմելը : Բայց հայտնի չե, վոր նման փակազժից չեք խոստովում և վ. Հյուգոն, վորի «Նատր Դամ դ'Պարի» պատմական հոշակավոր վեպի հայ թարգմանիչը (Նու-

պարյան) ստիպված եր կրճատման դիմել՝ առանց վեպի ընթացքը խանգարելու *) :

IV.

Մեր գրական քննադատության մեջ Ծեբենցի առավելուբյունները ամփոփվել են հետևյալ կետերում :

Նախ նրան համարում են առաջինը մեղանում, վոր պատմական հաջող վեպ և գրել : Դա սխալ կարծիք և : Թողնելով ժամանակի խնդիրը մեկուսի, պեք և ասենք, վոր մեր գրականության մեջ լավագույն պատմական վեպը Մուրացանի «Գեվորգ Մարգարետունին» և, վորի հետ մըցության կարող և գրվել վոչ թե Ծեբենցի, այլ Բաֆֆիի ըմանտիկական պատմավեպը : Հետևապես սխալ և այն պնդումը, վոր վոչ մի փաստով չի ամբայնդված, թե Ծեբենցը իր ախպերի միջոցով կենդանացրել և մեր պատմական կյանքը :

Ծեբենցի յերկրարդ առավելությունն և համարվել այն, վոր նա ունի բնության և տեղերի լավ նկարագրերն : Յերեք վեպերի մեջ ցրված նկարագրիներն այնքան հաղվազյուտ են քանակով, այնքան սակավախոս բովանդակությամբ և այնքան պրոզայիկ, վորպես ստեղծագործություն, վոր առանձնապես ուշադրության արժանի մի յերեվույթ չենք կարող համարել՝ հեղինակին վերագրելով նկարչական ձիրք : Մի յերկու նմուշ բերենք ցույց տալու համար Ծեբենցի նկարագրիները ընդհանուր բնավորությունը —

Գարնան նկարագիր. «Ամեն բան կծիժաղեր բլուրին վրա. ծառերը ծաղկած ելին, մանուշակ իր քաղցր հոտը կարճակեր. կանաչը դարնան ավետարեր կծածկեր շըջակայքը» («Յերկունք» յեր. 330) :

Պարմիրայի ավերակների նկարագիր. «Գրեզոր սքանչացավ մնաց այդ մեծ քաղքին ավերակաց վրա. անտպատին մեջ աղպիսի փառավոր քաղաք մը իր հետաքրքրությունը կշարժեր և ակամա ձիուն գլուխը դեպի արեգական տաճարը կըջեր : Կկենար կարգալու համար հոճական արձանագրությունները» («Թեոգորոս Ռչտունի», յեր. 140) :

Յերրարդ առավելությունն և համարվել բյուզանդական կյանքից առած ուշադրության արժանի տեսարանները : Վերև մենք տեսանք, թե վորքան ճիշտ կարող և համարվել այդ պնդումը : Յեթե Ծեբենցն իր վեպերի մեջ ցանկանար սալ բյուզանդական կյանքը, պիտի վերջինիս անկումն ու վարեջը պատկերացներ : Բայց մենք գիտենք, Հ. Պարոնյանն էլ այդ շեշտեց, վոր բարոյական արատներն ու բարոյապես փչացածները մեր հեղինակն անարժան և համարում իր գրչին և խոստովում և խոսել

*) Վիկտոր Հյուգոյի «Թշվառներե» մեջ ևս ամբողջ գլուխներ կան, վոր վեպի ընդհանուր ընթացքի հետ միայն հարեանցի կապ ունեն. որինակ՝ Վաթերլոյի ճակատամարտի և Պաշիպի կոյուզիների յերկարապատում նկարագրիները (տես մասն IV և V).

ներանց մասին: Որինակ՝ «Ի՞նչ հարկ խոսելու հույն կայսրութեան ժողովրդոց վրա, վորոնց մայրաքաղաքի ապականութիւնը... անցան դանցան Հոռոմ քաղաքացիոց վերջին որերը...» (նույն տեղ, յեր. 50):

Ծերենցի չորրորդ առավելութիւնն համարվել է այն, վոր նա լավ, հարուստ յերեակայութիւն ունի: Մի հեղինակ, վոր այնքան ստրկացած է պատմիչներէ ցուցմունքներին և տվաբներին, վոր հաճախ վեպը փոխում է ժամանակագրական անձոննի աղյուսակի և տեղի անտեղի շեշտում է, վոր ավելորդ է այս բնակարանը նկարագրել («Քորոս Լեոնի», յեր. 36), ավելորդ է այն անձի մասին խոսել («Քեպորոս Ռչատունի», յեր. 118), և այլն, — այդ տեսակ գրողի հարուստ կամ լավ յերեակայութեան մասին խոսք անգամ չի կարող լինել: Արեւելք նկարագրել և արեւելեյան յերանգավորում չտալ, վեպերը լցնել ճարտասանական շոնդալից մարդանրնրով, խուսափել հոգեբանական անալիզներից և վիպական հանգույցները պարբերաբար լուծել հրաշքների սցենութեամբ, — հաս Ծերենցի գրեթակերպը, վոր մեկուսացնում է վորեւ ստեղծագործական յերեակայութիւն: Ընչտ է, նրա վրձը «աշխուժ է», բայց դա հոետորական բնույթ ունի, այսինքն նախ տալիս է գաղափարը, ապա թարգմանում է ա՛յ վորեւ պատկերով, և վոչ թե պատկերներով մտածում, վոր հատուկ է արվեստագետին: Յերեք վեպերի մեջ մենք դժվարանում ենք ցույց տալ մի պատկերավոր դարձվածք, վորն անմոտաց մնար մեր հիշողութեան մեջ: Բրանդեսն այդ յերեույթը, այսինքն թե ինչ է մնում հիշողութեան մեջ կարգալուց հետո, համարում է գրվածքի արժեքավորման ձևերից մեկը: Ըստ ինքյան դա ծանրակշիւ ապացույց է: Յեթե միաժամանակ նկատի առնենք հեղինակի միտքնակ հերոսներին ու գրական արաթարեա պրիոմները, տարակույս չի մնա, վոր նրա յերեակայութեանը թույլ է և ստեղծագործական ուժեղ կարողութիւններով չէ ստաված:

Հիմեքորդ առավելութիւնն է համարվել սիրային տեսարանների գեղեցկութիւնը: Ի՞նչպէս կարող է սիրային տեսարանը գեղեցիկ լինել, յերբ սիրահարները կենդանի մարդիկ չեն, այլ մտացածին սխեմաներ, մանրքեններ: Ի՞նչպէս կարող է լինել անկիրք, անհույս սեր, քանի վոր սերը մեծագույն հույզն է: Սիրո նկարագրի մեջ Ծերենցը հանդիսանում է Վ. Սկոտի կույր հետեղը: Անդլիացի հեղինակի բարեկիրթ հերոսուհիները ծածկել գիտեն իրենց սերը «բնդ գրվանավ»: Պետք է նկատել վոր Ծերենցն իր ուսուցչի սայթաքումներն ընդորինակելով, անկարող է յեղել նրա գրական կողմերն յուրացնել: Վերջներք սիրային տեսարանի մի նմուշ: Տարիներ շարունակ սիրահարները միմյանց չեն հանդիպում, վերջպէս բախտը ժպտում է նրանց և մեծ-մեծ արգելքներ հայթհասարելուց հետո տեսակցում են: Հանկարծ նրանց մեջ խոսում է հոետորական մարմաջը և սերը քաջվում է հետին սլանի վրա, վայսնում են իրար մոտենալ, վորովհետեւ կրոնամոլ հեղինակի համար սերը «յոթ մեկեր-

բից» մեկն է, չնայած վոր նա մի գլուխ պնդում է բոմանտիկ գարոցի համոզումը թե՛ սերը բարձր է ամեն պայմանականութիւնից: Թերթան պրեակտիկա չի դարձել Ծերենցի ասկետական դրչի տակ («Յերկունք», յեր. 123, 305 և 414):

Գալով գաղափարական կողմին՝ մեր քննադատական գրականութեան մեջ Ծերենցի իդեոլոգիական առավելութիւններն են համարվել նրա համոզված սամկալարութիւնը և հայրենասիրութիւնը: Մենք արդեն տեսանք, թե վորքան արժեք ունի մեր վիպասանի գեմոկրատիզմը, թե վորքան վերջինս ամբողջութեանից գուրկ, հակասական և արվեստակալ մի համոզում է նրա աշխարհայայցի մեջ: Իսկ հայրենասիրութիւնն արտահայտված է նրա յերկերում, վորպէս աղգամոլութեան, վոր նորութիւն չէր այն շափով, վորքան նրա հիմքը կղերական-աղերքապետական մտայնութիւնն էր: Այս վերջինի սոցիալ-քաղաքական հիմքը աստիական բոնակայութիւնն էր, ճիշտ այնպէս, ինչպէս վոր — Յ. Մերինգի կարծիքով — գերմանական բոմանտիկայի հնասիրութիւնը ճնունը էր Նապոլեոնի ուժիմի. չկարողանալով ներկան փոխել՝ անցյալին են փարում...

Ի՞նչ արտահայտութիւն են գտել Ծերենցի արհեստն ու հասարակական գործունեութիւնը նրա վեպերում:

Նախ՝ Ծերենցը բժիշկ է յեղել, Պարիզի համալսարանում բնական գիտութիւններ սովորել է մի այնպիսի ժամանակ, յերբ գրական ղիսցիպլինների մեջ խոշոր հեղաշրջում էր կատարվել և եփուլուցիայի գաղափարը՝ բնոլոգիայից սոցիոլոգիայի մեջ մանելով և կիրառվելով, մետաֆիզիկական հասկացողութիւններից քար քարի վրա չեր թողել: Մեր հեղինակի համար այդ բոլորն անցել է աննկատելի: XIX դարի յոթանասնական-ութասնական թվականներին վեպեր գրելով՝ նա անտեսում է մինչև անգամ դարվիներդը, յերեույթներն րմբոնում է քարացած վիճակներով, մանավանդ այն բոլոր դիպվածներում, յերբ տարեր գասակարգերի փոխհարաբերութիւնը համարում է մշտնջենական ու անփոփոխ, «աստվածազիր» մի կարգ:

Յեւ վերկրորդ՝ նրա հասարակական գործունեութիւնը Պոլսում և Կիլիկիայում, հոետորական ու հրապարակախոսական ընդգրումները ընդդեմ «իշխանավորական դասի» և հանուն «ժողովրդական» շահերի, վեպերում արտացոլում են ստացել քառասուն կերպարանքով: Սկզբունքով նա չի ժխտում կղերական-աղերքապետական կարգը, ուստի և նրա գեմոկրատական քարոզները հիմնական յերեույթներ չեն: Ի հարկէ, հեղինակը պատասխանատու չէ իր ամեն հերոսի ասածի համար, բայց և այնպէս ընդհանուր ապավորութիւնն այդ է, մանավանդ վոր նրա գրեթակերպն ավելի քարոզչական է և նա իբրև արիբուն է խոսում: Նրա խոսքի պաշտամունքը բղխում էր իր հանրային գանդվածի քաղաքական անգործութիւնից:

ձիշտ է, նրա ճատերից մի քանիսը՝ ընդհանուր կապից անկախ ա-
 սած՝ «լալ» են, ունի մի քանի «Տաջուղ գեմքեր», «մի յերկու» շնորհալի
 նկարադիր, իր նյութը «Տեսաքրքիր պատմում է», բայց դա չպետք է
 դարձանալի համարվի, փորձվեալ ու վորոշ գրական կարիներա յե ունե-
 ցել, նա՝ աչպես թե աչպես՝ ձերք ունի: Խնդիրը միայն չափն է, և
 մեր նպատակն էր ցույց տալ, վոր աչպ չափը Ծերենցի վերաբերմամբ
 շատ պարկեշտ է: Յեթե նա կարդացվել է իր ժամանակին, դա նշան է,
 վոր մի քանի հանրային գաղափարներով արձագանգել է 70-ական թվերի
 այն «ժողովրդագաղա» ուղղութեանը, վոր ծայր է առնում արևելյան
 Յեփրոսյան, կապիտալիզմի քայքայումից ավատական արժեքները
 փրկելու և «նոր քաղաքակրթութեան» առաջ պատվարներ կանգնեցնելու
 համար: Այդ սպարդիցիան նրան նետել է միջնադարի գիրկը, նա դար-
 ձել է կղերական-ազնվապետական իդեոլոգ: Խնդիրների աննյութ, վե-
 րացական քննութեանը, մետաֆիզիկ մտածողութեանը, վոր անտեսում
 է գրված հարցերի կապակցութեանը հասարակական-տնտեսական յերե-
 վույթների հետ, նրան դարձրել է ազգայնական, վորովհետև նրա սի-
 բամ «ժողովուրդը» ներկայացնում էր մի անբաժան, շչեքտալորված
 մասսա, վորի ներքին կապերը լեզուն և կրոնն են միայն: Նրա ազգա-
 նականութեանը գերազանցորեն բուրժուական բնույթ ունի և ազգեցիկ
 լինելու համար միայն հագել է պատմական քրամիս՝ ֆեոդալական յե-
 րանգավորումով:

Յեթե Ծերենցը վորևէ յերախտիք ունի մեր զրահանութեան մեջ,
 դա այն է, վոր մի վորոշ ձերքով իր դարաշրջանի մտավորականութեան
 անորոշ վիճակն և հանդես բերել, մի վիճակ, յերբ հինը և նորը գե-
 շն անջատվել, գասակարգերի փոխհարաբերութեանները խորունկ շեր-
 տավորման շեն յենթարկվել, վորի հետեանքով նրա իդեոլոգիայի մեջ
 տիրում են հակասական նշանաբաններ—ֆեոդալիզմ և դեմոկրատիզմ:

Արվեստի բնագավառում ևս նա տեղ ունի: Մեր վեպի հորինվածքն
 ու լեզուն Ծերենցը դարձրել է հասարակական մտքերի արտահայտու-
 թեան գործիք, յեփրոսյանից փոխ առնելով և հայացնելով մի աշխուժ
 գրելակերպ, վոր ընդունակ էր—գոնե անխիկապես—նոր ժամանակի քա-
 ղաքային յետուն կյանքին դուզնթաց առաջ գնալու: Մեր թույլ պատմա-
 կան դրամայի կողքին Ծերենցի պատմավեպը մի կատարյալ նվաճում
 էր, վորով և պիտի մասամբ բացատրել մեր վիպասանի ժողովրդակա-
 նութեանը: Վերջինս շատ խորն ու ծավալուն շեր, քանի վոր մեծ տա-
 դանդ շուներ նրա կրողը: Նույնիսկ Ծերենցի համակրողներից մեկը զը-
 բում է 1893 թվին «Մասիս» հանդիսում. «Տակավին վեց տարի չի կա-
 տարթոս Շիշմանյանին մեռնելը և անունն ու իր հիշատակը՝ գրեթե այ
 մոռցված է, իրբ թե բնավ ապրում չըլլար»—(Յե. Ոստյան):

V. ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Իր պատմական վեպերի մեջ գասակարգերի համեմաչխութեան
 բարոյերով Ծերենցը ինչ նպատակների յեր հետապնդում ընալ կյան-
 քում:

2. ձիշտ է Մ. Բերբերյանի այն կարծիքը թե՛ Ծերենցը «խորապես
 նայում է իր հերոսների հոգու մեջ» (տես՝ «Армянские беллетристы»,
 էջ 448):

3. Անհատապես հետադարձան տաղանդ ունենալը և Գրիգոր Ոստյանի
 հետ միասին Պոլսում Բարեգործական ընկերութեան հիմնելու ձեռնար-
 կումը ինչ արտահայտութեան են գտել իր վեպերում:

4. Բաֆֆիի, Մուրացյանի, Փափազյանի և Ծերենցի պատմական վե-
 պերի սոցիալական տեսլանքները ինչ կոնկրետ տարբերութեան ունեն
 և ինչով ենք մենք բացատրում այդ տարբերութեանը:

VI. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ծերենց. «Յերկուսք Թ. դարու».
2. » «Թորոս Լեվոնի».
3. Յե. Ոստյան. «Հովսեփ Շիշմանյան», «Մասիս», 1893, էջ 387-
390).
4. Յերբերյան. «Ազգային գեմքեր», հատար V, էջ 357-458
5. Հ. Աճառյան. «Պատմութեան հայոց նոր գրականութեան»,
էջ 288-315.
6. Հ. Պարոնյան. «Մեծապատիվ մուրացիաներ», գլ. VIII, էջ 113-
114.
7. М. Берберян. «Армянские беллетристы» — стр. 441—452.

Թ Ր Ա Ք Ի Ր

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Բ. ԿՈՒՐՍ

I. Վրթանես Փափազյան. — Նրա քննադատական վերաբերմունքը Բաֆֆիի բոմանտիզմի նկատմամբ. — Այդ գրական դարձի սոցիալական հիմնավորումը. — Վրթանես Փափազյանի գրական տատանումները իրավ մանր-բուրժուազիայի անվճռականության արդյունք 1905 թվի հեղափոխության նախորդակին. — Անդրկովկասյան դյուղը և նրա բնութագրերը Փափազյանի յերկերում. — Մեր հեղինակի բնալիզմը, սիմվոլիզմը և նիշչեյականությունը. — Վերջինս իբրև միջոց բուրժուական արժեքները «վերադնահատման» գործում. — Պատմական վեպերի սոցիալական տևողենցը: — Յեղրակացություններ:

II. Ծերենց. — Պատմական վեպը ի՞նչ կերպ է արտացոլում ժամանակակից սոցիալ-քաղաքական կյանքի իրադարձությունը. — Ծերենցի պատմավեպը և տաճկահայ կյանքի առողջա խնդիրները. — Դասակարգային համերաշխության քարոզը «Յերկունք» վեպում. — Պոլսահայ բուրժուազիայի ձգտումը իր հեզեմոնիայի տակ աննելու մյուս դասակարգերին. — Առևտրական մրցում հույն վաճառականության դեմ. — Դրա գրական արձագանքը «Թորոս Լեվոնիի» մեջ. — «Եմնաֆ դասին» դուրեկան քարոզներ իշխան Թեոդորոս Ռչաունու բերանում. — Ի՞նչ նպատակի յեր ձգտում Ծերենցն իր այդ քարոզներով. — Վեպերի գեղարվեստական արժեքը. — Յեղրակացություններ:

III. Ս. Տյուսար և «բոմանտիկ վոճի» խնդիրը. — Արևմտահայ բուրժուազիայի դարգացումը և «կանանց հարցի» առաջագրումը. — Հրապարակախոսության մեջ այդ հարցի գրույթը. — Ստ. Վոսկան. — Տիկին Տյուսարի վեպերը. — Ի՞նչ չափով և նա արտահայտել բուրժուական հրապարակախոսության իղեայները կնոջ «աղատագրություն» նկատմամբ. — Մանր-բուրժուական և կղերական ուղղութիցիան «կանանց հարցի» դեմ. — Տյուսարի և ժորժ Զանգի փոխհարաբերությունը. — Նրա գրական բոմանտիզմի համեմատությունը մի կողմից՝ Ալիշանի և Պեչեկի-թաչյանի, իսկ մյուս կողմից՝ Պետրոս Դուրյանի բոմանտիզմի հետ:

IV. Արեևահայ լիբերալիզմի նոր շրջանը. — «Հյուսիսափայլի» հասարակական «ժառանգությունը». — Անդրկովկասի իրականությունը. — Առևտրական կապիտալի թեքումը դեպի արդյունաբերական կապիտալիզմ. — Գրեգոր Արծրունի. — «Մշակը» իբրև կազմակերպող կենտրոն. — «Հիմնական խնդիրները». — Հակառակորդներ. — «Հայոց հարցը» և Արծրունու քաղաքական սրիկնոսացիան. — «Սոցիալական հարցը» և լիբերալիզմի նոր ժառանգորդը. — «Մուրճ» ամսագիր. — Յեղրակացություններ:

V. Արեևահայ լիբերալիզմը և «բնալական արվեստը». — Գ. Արծրունու հայացքները արվեստի մասին և նրա առաջագրած «հրատապ հարցերը». — «Մշակի» գեղարվեստական թերթիները. — Լիբերալ «սկզբունքներով» մի նոր տաղանդ. — Շիրվանդադե. — Նրա աշխարհայացքը. — «Անհատական ինքնուրույնության գլխացումը». — Շիրվանդադեի պատմվածքները, վեպերը և դրամաները. — «Արտիստ», «Նամուս», «Քաոս» և «Պատվի համար». — Նրա ինքնարժեքավորումը «Կյանքի բովից» մեծուարների մեջ:

VI. Հովհաննես Հովհաննիսյան. — Գյուղը և գյուղացին Հովհաննիսյանի ստեղծագործությունում. — Նրա և Թումանյանի հուշակի տարբերությունը. — Քաղքենիությունը մեր իրականության մեջ. — «Միրո և վալեթի» հասարակական հիմնավորումը. — Պատմական անցյալի կուլտար. — Դասակարգային համերաշխության քարոզ. — Կյանքի և մահվան պրոբլեմը. — Հովհաննիսյանի սոցիալական իղեայները. — Նրա յերգերի գեղարվեստական արժեքը. — Յեղրակացություններ:

VII. Հովհաննես Թումանյան և «Գուգարքի յերգիչները». — Հայ գյուղը և հայ գյուղացին Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ. — Վոճի գյուղն և նրա իղեայը. — Թումանյանի վերաբերմունքը դեպի «նահապետական» գյուղն ու գյուղացին. — Ժամանակակից գյուղի բնույթագիրը նրա յերկերում. — «Գուգարքի յերգը», «Դժվար տարին» և «Գիբոր». — Ըմբոստացման փաստեր կա՞ն Թումանյանի գյուղում. — Հովիվ Չատին. — Նրա սոցիալական գաղափարախոսությունը. — «Քաոսայները». — Թումանյանի յերկերի գեղարվեստական արժեքը. — «Գուգարքի յերգիչները» (Ղ. Աղայան և Վ. Միրաքյան):

VIII. Հակոբ Պարոնյան և իր հաջորդները. — «Եմնաֆ դասի» վիճակը արևմտահայ իրականության մեջ. — Պարոնյանի իբրև այդ դասի յերգիծարան. — Նրա սոցիալական գաղափարներն ու յերգիծանքի հուճորական բնույթը. — Հասարակական դասակարգերի յերգիծական բընույթագիրը Պարոնյանի յերկերում. — Ամիրայություն, հոգեվորակախություն, վաճառականություն, ևնաֆություն. — Պարոնյանի յերկերի գեղարվեստական արժեքը. — Աղղեցություններ. — Պարոնյանի հաջորդները (Առանձար, Ռոյան և Ալֆիար):



ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Վ. Փափաղյան. «Գուրգ» և «Մշուշ».
2. [Redacted], յերևա 213 և 306.
3. Ծերենց. «Յերկուսեք» և «Թորոս Լեփոնի».
4. М. Берберян. «Армянские беллетристы», стр. 441—451.
5. Ս. Տյուսար. «Մայտա» և «Վարժուհին».
6. Ռ. Պերպերյան. «Կնոջ մասին» (տես «Հայ Գրողներ», հատ. 2-րդ յերևա 175-180.
7. Գր. Արծրունի. «Յերկասիրություններ», հատ. 1 և «Մշակն» ու «Հայ կինը» հոդվածների ժողովածու.
8. Տ. Հովհաննիսյան. «Գ. Արծրունու հիշատակին», «Մուրճ», 1902. № 12).
9. Շիրվանդազե. «Քառս» և «Պատվի համար».
10. [Redacted], հատ. 2-րդ, յերևա 3-7.
11. Հովհ. Հովհաննիսյան. «Բանաստեղծություններ».
12. В. Брюсов. «Поэзия Армении», стр. 77.
13. Հովհ. Թումանյան. «Բանաստեղծություններ».
14. [Redacted], («Գարուն» արձանագիտ., հատ. III. յերևա 248-315):
15. Հ. Պարոնյան. «Ազգային ջոջեր», «Մեծապատիվ մուրացկաններ» և «Քաղաքապարտիկան վնասները».
16. [Redacted], 1895 թ. հունիս). — Պարոնյանի գործը (տես «Մասիս» 1893 թ. № 2 և ...):

Ծանոթություն.—Աղբյուրները մանրամասնորեն կհիշատակվեն առաջագրություններին զուգընթաց:



ՀՀ Ազգային գրադարան



NL0372999

65164